



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

5836 - 5840

281-6  
0-90

# ՀԱՅ ԵՐԻՏԱԼՈՎԴՐՈՒԹԻՒՆ

---

ԲՈՂՈՔԱՊՈԽՈՒԹԻՒՆ

## ՄԱՂԱՔԻԱՅ Ձ. ՎԱՐԴԱՊԵՏԻ ՕՐՄԱՆԵԱՆ

ԱՐՏՈՒՐՈՒԵՍԼԻ

Ի ԿԱՐԱԾԻ Ս. ՍԱՀԱԿԻԱՆ ՍԱՆՈՒՑ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ի ՍԱՄԱԹԻԱ

Ի 24 ՓԵՏՐՈՒԱՐԻ 1880

---

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԵԱ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ա. Ա. ԳԱՆԹԱՐ

1880

323.1 (վ. 81.33)

# ՀԱՅ ԵՐԻՍԱՍԱՐԴՈՒԹԻՒՆ

ԲԱՆԱԽՈՍՈՒԹԻՒՆ

**ՄԱՂԱՔԻԱՅ Ռ. ՎԱՐԴԱՊԵՏԻ  
ՕՐՄԱՆԵԱՆ**

ԴՐԱՍԱՍԱՆԵԱԼ

Ի ԽԱՐԱՆԻ Ս. ՍԱՀԱԿԻԱՆ ՍԱՆՈՒՑ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ի ՍԱՄԱԹԻԱ

Ի 24 ՓԵՏՐՈՒԱՐԻ 1880



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ա. Ա. ԳԱՆԹԱՐ

1880

11259

7369-52

Հայ Երիտասարդութիւն, քեզ պիտի խօսիմ.  
Հայ Երիտասարդութիւն, քու վրադ պիտի խօսիմ.  
Հայ Երիտասարդութիւն, քեզի համար պիտի խօսիմ.  
բայց այնպէս պիտի խօսիմ; Տեա՛րք իմ և Տիրուհի՛ք,  
որ ազգին ընդհանրութիւնը միանդամայն պարու-  
նակեմ իմ տեսութեանցս ներքեւ, և երբ Հայ ազգին  
մէջ իւր Երիտասարդութեան ունեցած վիճակը՝ ունե-  
ցած գիրքը՝ և ունեցած պարտքերը աւուրս բանախօ-  
սութեան նիւթ կ'ընեմ, ոչ ոք որ Հայ է՝ օտար մնայ  
իմ խօսիցս. և թէ նա որ կը կարծէ Երիտասարդու-  
թեան հասակը անցուցած ըլլալ, և թէ նա՝ որ դեռ  
այդ հասակին հասած չէ և տակաւին մանկութեան  
մէջ կը գտնուի, հաւասարաբար կարենան օգտուիլ  
առաջիկայ բանախօսութենէս: Ուստի դուք ամենե-  
քին, Տեա՛րք իմ և Տիրուհի՛ք, դուք յամենայն վիճա-  
կէ և յամենայն հասակէ Հայորեր և Հայուհիներ՝ որ  
ձեր ներկայութեամբ զիս պատուել բարեհաճածէք,  
դուք ամենեքին իմ խօսիցս նպատակին և ընթացից  
օտար չէք, և առ ձեզ ամենեսին կը հային խօսքերս  
սերկեանս ատենաբանութեան մէջ:

Երբ Երիտասարդութիւն կ'ըսեմ, կը տեսնեմ որ  
կերպովմը երկդիմւթեանց տեղի կրնամտալ. և զա-  
նազանք զանազան իմաստով կ'առնուն խօսիցս առար-  
կայ ընտրուած նիւթը: Այս պատճառաւ կ'ուզեմ

կանխել և յայտարարել, թէ ժողովուրդք կամ ազգք՝  
մասնաւոր և անհատական անձի մը նմանութեամբ կը  
բացատրեն իրենց վիճակը, իրենց փոփոխութիւննե-  
րը և իրենց գործերը. և այս իմաստի ներքեւ՝ եր-  
կար միջոցներու չափերով իրենց ժամանակները կը  
բաշխեն: Ժողովրդի մը մանկութիւնը կամ երիտասար-  
դութիւնը, չափահասութիւնը կամ ծերութիւնը,  
բաղմաթիւ դարերու միջոցներէն կը կազմուին իւրա-  
քանչիւրը: Այդպիսի իմաստով ոմանք մեր Հայութիւ-  
նը ծերութեան մէջ կը գտնեն, վասն զի Հայն եղաւ  
երբեմն ժողովուրդ հզօր և ազգ կատարեալ ըստ ա-  
մենայն քաղաքագիտական առմանց, յետ որոյ տկա-  
րացաւ և զօրութէնէ ինկաւ. որով իբր թէ հնու-  
թեան և ծերութեան վիճակին մէջ մտաւ: Այլք նա-  
խընթաց կեանքը աւարտեալ և թալեալ համարելով,  
և Հայութիւնը նկատելով իբր նորածին մի ժողո-  
վուրդ՝ որ դեռ իւր նոր կենաց առաջին քայլափոխ-  
ներու կ'աշխատի, Հայութիւնը մանկութեան մէջ կ'են-  
թադրեն: Ինձ անտարբեր է բոլորովին այդ խնդիրը:  
Բարոյական տեսութիւններ՝ որք նմանողութեան վրայ  
կը հիմնուին, գլխաւորաբար ենթադրութիւններէ  
կը կախուին. և ենթադրութեանց վրայ վիճել ան-  
պիտան է և անօգուտ: Ես Հայ երիտասարդութեան  
վրայ խօսած ատենս երկնաշափ հեռի եմ այդ ենթա-  
դրութիւններէ և այդ տեսութիւններէ:

Ես կը նկատեմ Հայութեան ներկային մէջ գըտ-  
նուող անհատները, իրենց տարիքին տեսութեան  
ներքե միայն, և իւրաքանչիւրին բնական և իրական  
կենաց հասակին չափովը, կը բաժնեմ Հայութիւնը  
այն չորից հասակաց, որ տարւոյ մը չորից եղանակաց

նման, մարդկային կենաց չորս եղանակները կը կազ-  
մեն, գարնանային մանկութիւնը, ամառնային երի-  
տասարդութիւնը, աշնանային այրութիւնը և ձեռու-  
նային ծերութիւնը: Բայց ժողովուրդ և ազգ անհա-  
տէ մը կը տարբերի: Ասիկայ մի միայն է և ինքն յին-  
քեան փոփոխելով և հոլովելով յաջորդաբար չորս ե-  
ղանակները պիտի արտադրէ, իսկ ազգ և ժողովուրդ  
որ բաղմաթիւ անհատներէ բաղկացեալ է չորս եղա-  
նակները միանգամայն կը պարունակէ, վասն զի ան-  
հատք յաջորդաբար իրենց կեանքը սկսած են և այդ  
յաջորդութիւնք մասնաւոր խումբեր կը կազմեն, և  
իրարու մերձաւորութեամբ միանալով չորս մեծ բա-  
ժանումները կը գոյացնեն: Անհատք առանձինն իրենց  
հոլովման շրջանը կը կատարեն, իսկ ազգն չորս բա-  
ժինները միանգամայն ունի, և հոլովման շրջանը մի-  
ասնաբար կը պարունակէ, և չորից եղանակաց ազ-  
գեցութիւնը միանգամայն կ'զգայ, և անոնց համեմա-  
տութենէ իրեն ապագայն կը գուշակէ:

Հայութիւնը ըստ այսմ ո՛չ մանկութեան և ո՛չ ծե-  
րութեան մէջ կը նկատուի բացառաբար, այլ ման-  
կութիւն և երիտասարդութիւն, այրութիւն և ծե-  
րութիւն միանգամայն ինմա են, եղեն և լիցին ամէն  
ժամանակ, և այս երկրորդ տեսութեամբ առեալ երի-  
տասարդութիւնն է որ խօսից նիւթը պիտի ըլլայ:

Հարկ է այժմիկ քայլ մը ևս յառաջել, և որպէս զի  
աւելի ճշգիւ խօսից նիւթը յայտնուի, հարկ է ամէն  
կարեսը պարագայիւք և պայմանոք սահմանել Հայ  
երիտասարդութեան դաղափարը: Ո՞ր հասկէն կ'սկսի  
այն, և ո՞ր տարիքին կ'աւարտի: Բնախօսական չեն  
իմ բացատրութիւնքս, որ գիտնական դրութեանց ե-

տեէ ըլլամ։ Բարոյական առմամբ և բարոյական ըս-  
կրգբամբ, բարոյական նիւթի մը վրայ կը խօսիմ, և  
ինձ բաւական է նկատել և ձեզ նկատել տալ, թէ  
մարդկային կեանքը չորս բաժնի բաշխեցինք, թէ չորս  
բաժները գէպ է հաւասարաշափ բաշխել, թէ  
մարդկային կենաց բովանդակութիւնը՝ նաև ըստ Սաղ-  
մուերգութիւն կընամք ութուն տարի հաշուել, թէ  
այս կերպով հարկ է քսան տարուան միջոց ալ երիտա-  
սարդութեան տալ. և ի քսանամենից մինչև ցքառաս-  
նամեայս երիտասարդութեան մէջ պարփակել, որպէս  
և վախճանամեայ հասակը այրութեան և ծերութեան  
սահմանը համրել։ Արդէն քսառասունի և վախտունի  
մէջտեղ գտնուած անձինք սովորաբար առմամբ իբր  
այր կատարեալ կը սեպուին, և այս խումբը կամ բա-  
ժինն է որ ժողովսերը կը լեցնէ, նշանաւոր պաշտօննե-  
րը կը վարէ, գործերու մէջ գլխաւորութիւն կը վա-  
յելէ, և իբր փորձառու և խելահաս և խոհեմթէ ին-  
քըն իրեն առաջնութիւն մը կը սեփհականէ, և թէ  
միւս երեք բաժինք զոդ անհակառակ իրեն այդ ձիր-  
քերը և առաւելութիւնները կընդունին։

Քանի մը բացատրութիւններ ալ տամ, յառաւել  
ճիշդ իմացուած խօսիցս, և ի հալածել ոմանց մոտաց  
շփոթութիւնները կամ սխալ մեկնութիւնները։

Նախ հնար չէ այնպէս ճիշդ կերպով մը առնուլ  
երիտասարդութեան սկսելուն և աւարտելուն տարի-  
քը, որ ոչ համարողական ճշգութեամբ ամեն առթի  
և ամեն ատենի մէջ հարկ ըլլայ մեղ իննետասնամ-  
եայն և քառասունեմիտմեայն երիտասարդութենէ  
արտաքսել. կամ թէ քսանամեայն և քառասնամեայն  
ի հարկէ անոր մէջ փակել, բարոյական ստուգու-

թիւնք թէ բացառութեանց տեղի կուտան և թէ  
մերձաւորաբար առմանց վրայ հիմնեալ են։

Հնար չէ դարձեալ այնպիսի իմաստ մը տալ ման-  
կութիւն կոչուած հասակին, որ իբր թէ մեղմէ մեր-  
ժուած համարութիւն մանկութեան, տղայութեան, պա-  
տանեկութեան և պատանութեան մէջ դրուած զա-  
նազանութիւնները։ Ասոնք ստորաբաժանումներ են,  
որովք հնար է վերստին իւր մէջ զատել մարդկային  
կենաց առաջին գարնանային եղանակը, զոր անխտա-  
բար կընայինք այդ անուններուն միովն կամ միւսովը  
անուննել, այլ ես վերագասեցի մանկութիւն բառը  
գործածել և իմանալ այն տարիքը, յորում ոք գեռ-  
խակ է և համբակ, և գեռ ուսանողի և աշակերտի  
կեանք կը վարէ առ ոտս ծնողաց կամ դաստիարա-  
կաց, վարժապետաց կամ խնամակալուաց։ Բառից և  
բծախնդիր ճշգութեանց խնդիրներ ինձմէ օտար են  
բնաւին, և չըլլայ թէ ոք այդ կէտերու վրայ խծբա-  
նօք յարձակի, և կարծէ թէ ես իրեն հետ վիճել յան-  
ձըն պիտի առնում։ Բարոյական և ընկերական խըն-  
դիրք այդ պայքարաց յարմար ասպարէզ չեն։ Որով  
և հարկ է բանախօսիս միայն տարիքի պայմանով չշա-  
տանալ, և գեռ ուրիշ պայմաններ ալ յառաջ բերել,  
որով ճիշդ իւր առման մէջ իմացուի և ներկայացուի  
Հայ երիտասարդութիւնը։

Իբր երիտասարդութեան պայման կը նկատեմ ես՝  
որ սկզբնական կրթութեան ընթացքը լրացուցած ըւ-  
լայ ոք, և դաստիարակութիւն ընդունելու հարկէ ա-  
ղատած։ Եւ այս ոչ թէ միայն դպրոցական դաստի-  
արակութեան մէջ կը ճշմարտուի. այլնաև ընտանեկան  
դաստիարակութեան և ընկերական դաստիարակութեան

մէջ։ Երիտասարդո՞ւ իրեն կրթութիւնը աւարտած, գաղափարի մը տէր եղած, իւր վիճակին և ապագային համեմատ դաստիարակութիւն ստացած անձ մի է։ Թերեւ ինքն դեռ ուսման պիտի աշակերտի, այլոչ թէ այնպիսի ուսման՝ որ դաստիարակութեան մաս կը կազմէ, այլ այնպիսի ուսման՝ որ արուեստի մը և ապագայ կացութեան և կենաց ապրուստի իբր միջոց մը կ'ստացուի, ինչպէս են բժշկագիտական, փաստաբանական և ճարտարապետական ընթացք և այլ համալսարանական ուսմունք։ Այդպիսի ուսմանց աշակերտը՝ այլ ևս մանկութեան սահմանին մէջ չեն, և մինչ մէկ կողմէն դասառութեանց կը յաճախեն, միւս կողմէն գործունեայ մարդեկ կը սեպուին, ոչ իւիք տարբեր ուրիշ երիտասարդներէ՝ որք գործարաններու կամ կըրպակներու մէջ կ'աշխատին, կամ հաշուեկալութեան և դրագրութեան զբաղմամբք գրասենեակները և պաշտօնարանները կը լեցնեն։

Երիտասարդութեան միւս պայմանն ալ գործառնութեանց ձեռնամուկս ըլլալու անձնական կարողութիւնն է. ներքին աշխոյժ, զօրաւոր ոյժ, ջերմ եռանդ և բուռն կամք. որով երիտասարդը թէ ներքին սըրտոտութեամբ և թէ արտաքին ակնածութեամբ, թէ անձնական և թէ հասարակային, թէ մասնաւոր և թէ ընդհանուր գործոց ձեռք կը զարնէ և անխոնջ կերպով կ'աշխատի։ Նա՝ որ այդ կարողութիւնը դեռ չէ ստացած, երիտասարդութեան սկսած չէ. թէպէտ և քսան տարին լրացուցած ըլլայ, այլ ընդհակառակն նա՝ որ թէ դաստիարակութեան ընթացքը աւարտած է և թէ այդ կարողութեան նշանները կը յայտնէ. երիտասարդ է թէպէտ վերոյիշեալ տարիքը հասած չըլլայ։

Ս.յո սահմաններով և պայմաններով Հայ երիտասարդութեան իմաստը բացարելէս ետքը, երբ աչքս շուրջու կը պարտցնեմ և պատուական ունկնդրացդ վրայ հայեցուածք մը կը նետեմ, ինձ այնպէս կ'երեխ թէ քիչեր ձեր մէջէն կրնան ինքզինքնին անկէց գերծուցանել. որով և վստահօրէն կը խօսիմ ձեզ, Տեա՛րք իմ և Տիրուհիք, և ձեզ խօսելով ստոյդ եմ թէ բոլոր Հայ երիտասարդութեան կը խօսիմ։ Ս.յո՛, բոլոր Հայ երիտասարդութեան՝ որ սփոռուած է ի քաղաքի աստ և յաշխարհիս մերում և յոլորսա երկրի. որովհետեւ կը խօսիմ Հայ երիտասարդութեան ընտիր մէկ մասին, որ իւր ձրիւք և արդեամբք գովելի հանգիսացած է ցարդ, և որ արժանի է որ ես զինքը նկատեմ իրաւամբ՝ իբր ներկայացուցիչ բովանդակ Հայ երիտասարդութեան։ Ոչ ըստ գիպաց կամ թէ ի չնորհուկս կը խօսիմ սյապէս, այլ ի բովանդակ սրաէ և մտաց, և ոչ թէ ես միայն այլ ազգովին Հայք գիտակ են թէ քանի բարեգովլարդեանց և բարեջանն ձեռնարկութեանց հեղինակ եղած է Բիւզանդեանն Սամաթիոյ Հայ երիտասարդութիւնը։ Դուք գիտէք զիս, Տեա՛րք իմ և Տիրուհիք, որ գովեստից մէջ առատ չեմ. մխիթարական խօսից գիտեմ զանձն իմ պաշտօնեայ, այլ և միանդամայն ստուգապատում ծշմարտութեան կամակատար հպատակ. որով ինչ որ ըստ բաւական ըլլայ, և փութամբ յաւէտ քննել թէ ի՞նչ է մեր Հայ երիտասարդութեան կացութիւնը։

Հայ երիտասարդութեան կացութիւնը, տարբեր ըլլմար ըլլալ ընդհանուր աշխարհի երիտասարդութեան կամ գլխաւոր ազգաց երիտասարդութեանց վիճակէն, ցորչափ նոյն մարդկային բնութիւն հասարակ է՝ բո-

լոր աշխարհի և բոլոր մարդկութեան : Այն ամէն նըմանողական օրինակք՝ և մեկնական բացատրութիւնք և յայտարար զրոյցք՝ զորս բանախօսք և բանաստեղծք ձեռք ձեռքի տուած երիտասարդութեան վրայ գրբեցին և կը դրեն, ամէնն ալ զարմանալի համաձայնութեամբ մը երիտասարդութեան առաւել փայլ կը յատկացնեն քան գործ, առաւել աշխոյժ՝ քան արդիւնք, առաւել ակնկալութիւն՝ քան իրականութիւն, առաւել սկզբնաւորութիւն՝ քան կատարելութիւն : Երիտասարդութիւնը այն պայծառ ամառն է՝ յորում ամենայն ինչ դեռ կանանչ և գեղատեսիլ . եթէ պտուղք արդիւնաւորեալ են, բայց համբարեալ չեն, ամենայն ինչ սաստիկ տօթով կը վառի և քրտնաթոր ճգամբ կ'ուոզի, կը տոչորի բնութիւնն համայն, և կիզու ամենայն ինչ ի սաստիկ ջերմութենէ իբրև զհնոց բորբոքեալ : Այդպէս կը նկարագրուի երիտասարդութիւնը . և եթէ բոլոր գովեստից և ներբողենից հետ իրեն ամբաստանութիւն մը կ'ուղղուի, այն ալ մասամբ սաստիկ եռանդեան և մասամբ սակաւ փորձառութեան վրայ հիմնուած է :

Ամենայն ազդք և ժողովուրդք, յորս չորս բաժինք՝ իբր մշտառե եղանակք յարաժամ գոյացեալ և իրականացեալ միանաբար կ'ապրին, երկուց բաժնից կամ հասակաց կամ եղանակաց դիմամբցութեանց ապարէղ են : Մանկութիւն անկար տակաւին, և ծերութին թափեալ ի կարողութենէ, կարծես հանդիսականի ձեւ մը կ'առնուն ըստ մասին . ըստ մասին կը սեմ, վասն զի ասոնց երկուքն ալ բոլորովին զրկեալ չեն գործակցութենէ, և երկուքն ալ իրենց դերը և իրենց գործերը ունին ընկերութեան մէջ . բայց որովհետեւ

իրենցմէ զօրաւորագոյն են միւս երկու բաժինք, անոր համար ասպարէզը այն երկուց ձեռքն է, որք մշտառե մրցանօք զիրար գլել կը նկրտին և միւս երկու հասակները նիզակակից կը գործածեն, երիտասարդութիւնն զմանկութիւն, և այրութիւնն զծերութիւն : Ահա ասպարէզն՝ յորում պէտք է վնտուել թէ ինչ և ինչ կ'ընէ երիտասարդութիւնը :

Մի՛ կարծէք, ունկնդի՛րք իմ, թէ բնազննական և բարոյազննական խորհրդածութեանց ներքեւ թաղէմ ձեր ակնկալութիւնները . ինձ բաւական են որչափ ինչ ըստ ինքեան ծանօթ սկզբունք են ի մասինս, և որչափ ինչ նախընթաց բացատրութեանց մէջ մեկնեցի : Մեծ գեր մը կը խաղայ երիտասարդութիւնը ամէն մարդկային ընկերութեանց մէջ . իւր են ամէն գովանի սկզբնաւորութիւնք . այն սկզբնաւորութիւնը իսկ յորս ելքն կեղակարծ են, և յաջողութիւնն երկբայական, և վախճանն վտանգաւոր : Եթէ երիտասարդք չինէին, ոչինչ նոր և օգտակար լինէր երեքք յաշխարհի, վասրն զի նոր շարժում, նոր բազծանք, նոր ջանք և նոր փորձ երիտասարդին մասն են մարդկային ընկերութեանց պարունակին մէջ :

Բայց եթէ և երիտասարդք միայն լինէին յաշխարհի, և ընկերականութեան վարչութիւնը և զվարաբութիւնը երիտասարդութեան ձեռքն իյնար, — չեմ ուզեր ոչ զոք վշտացնել և ոչ զոք կոտրել, — սակայն համարձակ ալ պէտք է խոսանվանիմ՝ թէ մարդկութեան բազդքը ընտիր չէր ըլլար, և իրեն վիճակն իսկ ի վտանգի կը մնայր . որովհետեւ վտանգը սիրել, վտանգին մէջ կորսուելուն շատ մօտ է . երիտասարդութիւնն ալ վտանգէ չխորշիք :

Երիտասարդութիւնը աղգութեան մը՝ և որ և իցէ  
ընկերութեան դլուխը չէ . բայց երիտասարդութիւնն  
է աղգութեանց և ամէն ընկերութեանց ձեռքը . ե-  
թէ առաջնորդ չէ , բայց գործադիր ինքն է : Այս է  
իւր էութիւնը և այս իւր գործը , և այս բացա-  
տրութիւնը ինքնիրեն բաւական ճարտարիմաց է և  
ճարտարախօս : Իսկ անոր ճշմարտութեանը վկայ փորձն  
համաշխարհական և փորձն համազգական , ևս և փորձն  
անձնական՝ զոր անցնիւր յունկնդրացդ իւր համուօտ  
կենաց շրջանին մէջ ստացած է : Եթէ ընդհանուր աշ-  
խարհի մէջ երիտասարդութեան դիրքը և գործը մեկ-  
նաբանելու ձեռնարկեմ , կը խիթամ թէ նպատակէս  
դուրս շեղած պիտի համարուիմ , որովհետև ընդհա-  
նուր առմամբ երիտասարդութեան վրայ խօսիլ որած  
չեմ . այլ միայն Հայ երիտասարդութեան վրայ : Հարկ  
կը սեպէմնակ զեկուցանել թէ չըլլայ թէ ոք սպասէ  
Հայ երիտասարդութեան վեպը լսել՝ անդստին յան-  
յիշատակ ժամանակաց տղղին մերոյ , վասն զի այդ  
և դժուարին կէտ մի է , և թէպէտ անօգուտ չէ ,  
այլ մեզի անընդմիջաբար օդտակար չկրնար ըլլալ :

Որովհետև ոչ թէ հմտութեանց տեսակէտիններ-  
քել կը խօսիմ ես աստին , դիտելով ձեր միտքը դարդարել  
կարևոր և գեղեցիկ տեղեկութեամբք և գիտնական և  
աղդասիրական զնութեամբք . այլ յաւէտ գործնա-  
կանին եմ մտադիր , թէ ո՞րն է ներկայ Հայ երիտա-  
սարդութեան զօրութիւնը և ո՞յք են նոյն երիտասար-  
դութեան պարտքերը : Ժամանակք կ'ստիպէն զմեզ  
ի գործ , երիտասարդութիւնն է գործունեայ հասակը .  
ինչպէս կը պատրաստուի երիտասարդութիւնը , այն-  
պէս կը յաջորդեն ապագայ . ժամանակները :

Երիտասարդք Հայութեան . գիտէ՞ք արդեօք ձեր  
զօրութիւնը . բայց կ'ուղէի թէ գիտնայիք ոչ յանձ-  
նապաստան և մնապարծ մոլութեամբ , մեծ ինչ կար-  
ծելով լինիլ՝ մինչ ոչ ինչ էք գործով . այլ կ'ուղէի յա-  
ւէտ որ տպաւորէր ձեր մտաց մէջ ինչ որ ճշմարտու-  
թիւն է և ստուգութիւն , վկայեալ ի ձրից և հաստա-  
եալ ի գործոց : Զիրք կ'անուանեմ ես այն ամէն յատ-  
կութիւնները զորս երիտասարդութիւնը պիտի ունե-  
նայ կամ ունի կամ ունել կը ձդտի , իսկ գործք այն  
իրական արդիւնք են՝ զորս գիտցած է ինքնին կա-  
տարել , յաղթերով իսկ բազմապիսի դժուարութեանց :

Որովհետեւ քսանամեայ միջոցներու դրութիւնընա-  
խադասեցի , գարձնեմք ուրեմն մեր աչքը՝ զննել սա-  
կաւուք անցեալ քսանամեայ միջոցները , 20էն ց40 ,  
40էն ց60 , և 60էն ց80 , որոց մէջ առաւել քանի նա-  
խընթաց ժամանակս աղդիս երիտասարդութեան դերը  
մեծցաւ և ի լոյս աշխարհի սկսաւ երեխիլ : Որք այդ  
միջոցներուն մէջ իբր երիտասարդ մրցեցան և գործե-  
ցին կամ կեանքերնին աւարտեցին կամ սկսան ծերու-  
թեան հասակին սեմը կոխել , կամ այրութեան կատար-  
եալ հասակին արդիւնքը վայելել :

Ամենեքին որ քառանամեայ և վաթոնամեայ  
հասակը անցուցած են այսօր և նախընթաց հասակ-  
ներուն մէջ կատարած գործերնին կրնան ցուցնել  
մեզի իբր յորդորակ և օրինակ , ամենեցուն վկայու-  
թեամբ ընտիր երիտասարդներ եղած են , և այդ տա-  
րիքին մէջ իրենց կատարած գործերովը երախտա-  
պարտ ըրած են աղդը , և երախտեօք զնա ուրախա-  
ցուցած :

Ոչ յանդէպս յիշեալ տարիններէ անդին շեմ անց-

նիր . վասն զի այդ տարիներէ առաջ երիտասարդութիւնը և ոչ իսկ կրցած էր յասպարէղ գալ , և որք ազգային գործոց տեղեալ են , պիտի խոստովանին թէ հազիւ ծանօթութիւն իսկ կայր ազգին մէջ , թէ երիտասարդութիւն մը կայ և թէ անկէց օգաակալ արդիւնքներ կընան յառաջ դալ : Մեր հին անցելոյն ինչպէս եղած և գործուած ըլլալուն նկատմամբ մանրախոյդ տեղեկութիւնք կը պակսին մեզ , և չենք կարող հաստատել երիտասարդութեան գործերը հին դարերու մէջ , թէպէտ և մակաբերութեան և իմաստասիրութեան փաստեր , և պատմութեանց խորշերուն մէջ պահուած մանր պարագայք ըստ բաւականին կը ծանուցանեն մեզ , թէ գլխաւոր յիշատակութիւնք որք կատարիցան յազգիս , գլխաւոր շարժմունք՝ ազգին նոր ձեւ և նոր կերպարանք աալու , գլխաւոր ջանք՝ որպէս զի յառաջադիմութեան բարիքը արմատանայ ի մեզ , երիտասարդութեան արդիւնքն եղան : Իսկ երբ ազգն թշուառութեանց և հակառակութեանց ծովուն մէջ թողեալ , և ի ցաւոց գոգ անզգայցեալ , երկար ժամանակներ և շատ դարեր անոք և անօդնական զրկեալ մնաց , և չկրցաւ տարածեալ շարժում մը արդիւնառորել , և ոմանց գիւցազնական ճիգը անքաւական եղաւ բովանդակ ազգութիւնը ոգեսրել , այդ դժնդակ միջոցին մէջ , ինչպէս ամենքնիդ գիտէք , երիտասարդութիւնը ի խոր քուն թմրութեան կը խորթայր , և մարդ չէր որ այդ ազնիւ եռանդը զարթուցանէր :

Մանր ուսումն իսկ , սակաւաւոր դաստիարակութիւնն , անկատար կրթութիւն և թերի հմտութիւնք՝ զորս Հայ մանկութիւնն սկսաւ բունակ իններամնե-

րորդ դարուս առաջին քառորդին մէջը կամ վերջը , սուրբ հուր եղան և վառեցին Հայերը ի տեսչ բարոյն և ի մշակութիւն աստուածապարգե բանին և հանճարոյ և ի վայելումն այն բարեաց՝ որք յաստիս օրինադրեցան . ոչ թէ ունայնութեան զգ այական հեշտութեանց համար՝ այլ բարոյական կարգի և ընկերական գրութեան և մեր ազգայնութեան կատարել ագործուելուն համար . Այդ թերուս մանկութեան յաջորդեց երիտասարդութիւնն , զօր առաջին կը թուեմ ես ի շարս արդիւնաբեր և երախտաւոր նօր երիտասարդութեանց՝ որք վերջին ժամանակներու մէջ Հայութեան բաղդին հետ լծակցեցին իրենց անունը : Սկսան շարժմանք ուսման և դաստիարակութեան՝ զգացեալք իբր անտնօրինելի պէտք և տարածեալ առ ամենայն ազգն և առ ամենայն քաղաքն և գիւղը և թաղս , և ոչ ևս պահեալ իբր առանձնաշնորհութիւն ոմանց կամ սակաւուց : Վարժարանք՝ որք կարացին ապա ազգօգուտ անձանց սերմնարան ինսել , այդ միջոցին մէջ կանգնեցան , և երիտասարդ անձինք որք ոչ ի դժուարութեանց կը փախչէին , և ոչ ի ձախողութեանց կը կասէին , հիմնադիրք եղեն սատ և անդ գեղեցիկ հաստատութեանց . և իբենք եղեն պատճառ որ ազգը ունեցաւ յաջորդ միջոցի մէջ երիտասարդութիւնն մը՝ որ իւր կըթիչը գերազանցեց . և ազգային հոգին իմացաւ և զգաց՝ լսւագոյն և քան զիւը ուսուցիչն :

Ոհաւասիկ միջոցն յորում ձեմարանեան և Սուրբ Սահակեան սանունք , իրենց մանկութեան միջոցը աւարտած կը մտնան յասպարէղ իբր երիտասարդք և իբր գործող անդամք ազգութեան : Դաստիարակու-

թեան ասպարէզը և գաստիարակեալ աղդութեան խայթը չեն բաւեր այլ ևս այս իղձերն յագեցնել, առաւել կը բարձրանան սոքա իրենց ձգամանց և իրենց բարձանաց մէջ, որովհետեւ աւելի բարձր նպատակ մը կ'ըմբռնէ նոր երիտասարդութիւնն իւր գաղափարներուն մէջ։ Ազգային կաղմակերպութեան և վարչութեան ձևոյն վրայ կը տարածէ իր միտքը, և իր ուշը ի նոյն սեեռելով և հետազննին փոյթը առ արտաքինսն դարձնելով, նոր դարուո ոգին կշռադատելով և յառաջադէմ աղդաց օրէնքները հետազննելով, կը հետեցունէ թէ սահմանադրութեան ձև մը հարկաւոր է, և այդ ձևոյն ստացութեան համար կը զինի նոր երիտասարդութիւնը, իրեն նիզակակից դանելով նախընթաց երիտասարդութեան մեծամասնութիւնն ալ. թէպէտ և չեն պակսիր տարերք, մնացորդք առաւել հին երիտասարդութեանց, որք դիմագրել կը ճգնին և դժուարութիւններ յարուցանել։ Բայց յաղթող է զօրութիւն որ ընդ արութեան և զխոհականութիւն կը լծորդէ։ Սահմանադրութեան հաստատուելուն պատմութիւնը այնչափ մօտաւոր է՝ որ իբր ուկնդրացդ ծանօթ և իբր ժամանակակից գէպքս բանախօսիսներեալ կը սեպեմ զայն՝ իբր քաջածանօթս ենթադրել և ակնարկութեամբ միայն շատանալ։ Սահմանադրութիւն ո՛չ միայն եկաւ ի դոյութիւն, այլ և տիրապետեաց գամ քան զգամ, մինչև որ իւր զաւակունք բարձրացան ի գահ Պատրիարքութեան և Սահմանադրութիւն իշխել սկսաւ ի վերայ աղդիս անհակառակ։

Որք երիտասարդութեան աշխուժիւ վառեալ զազգն սահմանադրութեամբ ճոխացնելով՝ իրական թէ

ոչ պաշտօնական հեղինակներն եղեն, կը խոստովանին ապաքէն թէ նպաստ և հովանաւորութիւն գտին անոնցմէ՝ որք իրենցմէ առաջ աղդին յառաջագիմութեան համար շահատակած էին և գաստիարակութեան բարիքը ընդհանրացնելու համար աշխատած։ ապա թէ ոչ եթէ լոկ երիտասարդութիւնը իւր աշխուժին թողուած լինէր, կարծեմթէ ոչ իւր ճգանց յաջողութեամբ պսակուելուն ականատես կրնար ըլլալ, և ո՛չ իւր գործը կ'օտանայր այն խոհականութեան և խոհեմութեան զարդը, որով միայն կատարեալ և ընդունելի կերպարան կ'առնու ամենայն ինչ։ Որք իբր գործօն և եռանդուն անդամք երիտասարդութեան սահմանադրութիւն գոչեցին և սահմանադրութիւն ինդրեցին և սահմանադրութիւն հիմնեցին, այսօր իրենց երիտասարդութեան հասակը լրացուցածեն, և իբրև արք կատարեալք և հանդարս փորձադուք՝ պաշտամանց գլուխը կը կենան. և ամենայն աղդս ճանչնալով իրենց արդիւնքը, խոստովանելով իրենց արժանիքը, պատուելով իսկ զանոնք՝ կը փութայ ընծայել իրենց ինչ որ պարտ ու պատշաճ է։ Զերկբայիր արգեան երիտասարդութիւնը նախընթացէն ըստացած բարիքը ճանչնալ, և ուր որ հարկ է՝ գովեստներ իսկ խօսիլ անոր վրայ. և երբ անոր դէմ անարդանք մ'ըլլայ, իւր փութովը և ջանիւք անոր պաշտպանութիւնը կատարել։ Զայդ վկայութիւն կուտամ և ես, որ վերոյեղեալ սահմանաց գիծերուն ենթարկելով զանձնս, կը տեսնեմ որ ընդ հուպ երիտասարդութեան խումբին անդամակցութէնէ պիտի արտաքսուիմ. այլ դեռ իբր հնացեալ մի անդամ նոյն խմբին՝ չեմ տարակուսիր այդ հրապարակային վկայու-

թիւնը տալ ի գովեստ նախընթաց երիտասարդութեան : Եւ աներկեան եմ թէ և բովանդակ իսկ անդամքդ և կազմողքդ արդեան երիտասարդութեան իմ խօսքս պիտի հաստատէք :

Այդ խոստովանութիւնը ընելէս ետքը , ոչ ոք կրնայ այլ ևս զիս ստդտանել եթէ կը յաւելում , թէ արդեան երիտասարդութիւնն ալ , երիտասարդութեան բնածին դրդմանց և զգածմանց հետեւով իրեն սեփհական ասպարէզմը բանալ կ'ուզէ , և այդ ասպարէզին ամենայն փափագանօք յարուած է , և այնչափ սաստկութեամբ՝ որ սկսած է արդէն դանդաղ և անշարժ դատել այն անձինքը , որք իրենց երիտասարդութեան մէջ ամենէն սաստիկ ազգային յեղափոխութեանց հեղինակ և պաշտպան եղեն . սակայն իրենց կատարած գործոց վրայ ծնողական սէր մը տածելով , և բնական կերպով ալ հասակի և արեւան հանդարտութեան ազդեցութեան ներքեւ մտած ըլլարով , կը սիրեն այժմ պահպանողական ընթացից հետեւիլ , քան թէ նոր շարժմամբ նորանոր վտանգաց ենթարկուիլ կամ նոր փորձանաց ընդդէմքալել : Խոհականութիւն աշխայժը փոխանակած է , և խոհեմութիւն համարձակութիւնը : Ոչ ևս այրութիւնը թոյլ կու տայնոցա յախուռն խիղախել և աներկիւղ յառաջել . և երբ ոք ընդհակառակն բարբառի , կամ երբ երիտասարդութիւնը իրենց նախկին բուռն աշխայժը յիշեցնէ և նորէն նոյնը պահանջէ ի գործ , սովոր են պատասխանել , թէ «Մինչ տղայ էի , իբրև զտղայ խորհէի » :

Սակայն ինչո՞ւ չսիրել անցեալ մը՝ որ փառաւոր էր և արդիւնաւոր . և ինչո՞ւ չուզել չնորհել արդեան

երիտասարդ ութեան ալ այն առանձնաշնորհութիւնը՝ զոր ոք իւր երիտասարդութեան ատեն պատուով և շահով գիտցաւ գործածել : Բնական փաստով իսկ կարող եմք երիտասարդութեան պաշտպանութիւնը կատարել . նկատելով թէ ամաց հոլովելովը և ժամանակաց փոփոխելովը կը փոխսւին ևս պարագայք , և պարագայից հետ պահանջմունք , և պահանջմանց հետ պարտիք , և պարտեաց հետ իրաւունք , և իրաւանց հետ գործք , և գործոց հետ ձեռնարկութիւնք , և ձեռնարկութեանց հետ նպատակք , գոնէ անմիջական և մասնաւոր նպատակք . և այդ յարատե շղթայաշար փոփոխութեանց մէջ , ինչպէս հնար է զլանալ մեր երիտասարդաց այն իրաւունքը , զոր եթէ նոքա չուզէին ստանալ , մեք իրենց վրայ իբր պարտք գնելու պիտի հարկադրուէինք :

Երիտասարդք և ոչ երիտասարդք՝ որ զիս կը լոէք և որ զիս չէք լսեր , ամենայն Հայազգիք որ մեր ազգին ընթացից վրայ կը խորհրդածէք , առանց կրից և առանց նախապաշարմանց և առանց նկատմանց քննեցէք մեր ազգին վիճակը , և անկեղծօրէն յայտնեցէք . թէ նոյն է՝ ազգս՝ ինչ որ էր ասկէ քսան տարի առաջ . նոյնութիւն մը կը գտնէք 1860 և 1880 տարիներու մէջ . նոյն կը լուսաց ըլլալ արդեօք ազգը՝ որ յայնժամ սահմանադրութիւն մը ունենալու յետին ծփանաց մէջ կը յուզուէր , իսկ այսօր այդ կէտը իբր աւարտած և յառաջացած նկատելով իրեն համար նորահաստատ գիրք մը կը բաղձայ և կ'սպասէ ստանալ : Ինչպէս ուրեմն պարտաւորեմք մեք արդեան երիտասարդութիւնը կապուիլ այն կանոններով՝ որովք նախընթացը կապուեցաւ : Ինչպէս պարտաւորեմք արդեան երիտասարդութիւնը

դութիւնը շատանալ այն յառաջադիմութեամբք՝ որովք նախընթացը շատացաւ : Խնչպէ՞ս պարտաւորեմք արդեան երիտասարդութիւնը միսիթարուիլ այն յաջողութեամբք՝ որովք նախընթացը միսիթարուեցաւ :

Ոչ ապաքէն շարունակ յառաջադիմութեան և շարունակ զարգացման բաղձացող եմք ամենքնիս, անտիական մանուկէն մինչև զառամեալ ծերունին . և ի՞նչ այլէ երիտասարդական աշխուժին նորանոր գործոց ձեռնարկելը և նորանոր խորհրդոց հետեւիլը և նորանոր նպատակներ ստեղծելը, եթէ ո՞չ այդ բնածին զգածմանց բացատրութիւնն և բնական պարառոց գործադրութիւնը : Ի հարկէ բոլոր մարդկային կեանքը կարող չէր իւր ամէն հասակին և ամէն կացութեան մէջ հաւասարապէս այդ նպատակին աշխատիլ . և հետեւաբար ալ հարկ էր որ ըլլար այն հասակը, որոյ գործը ըլլայ նոր գաղափարաց ծնունդ տալ, և անոնց հաստատութեան համար մրցիլ, գժուարութեանց դէմկուուիլ, և առաջին անյաջողութեանց մէջ չյուսահատիլ . այդ պէտքը լեցնելու կանչուած և կարգուած է երիտասարդութիւնը : Մեր Հայ երիտասարդութիւնն ալ, գիտալով իւր պարտքը և իւր իրաւունքը, կէս դարէ ի վեր քաջաբար մատեաւ յասպարէց, և կուուեցաւ արիաբար, և շահատակեցաւ դիւցազնաբար, և վերջին երիտասարդութեանց փառքը լիաբերան գովեստիւ կը յիշատակեմ ես աստէն, և ամենայն Հայոց օրհնութեանց կը յանձնարարեմ:

Նաև ներկայ երիտասարդութիւնն իւր նախորդաց հետոց վրայ քալելով, ճանչնալով որչափ ինչ իւր պարտքն է, և ի բարին գործածելով իւր իրաւունքը, ահա՛ կանգնեալ յասպարէզի աղգութեան, բարձրա-

գոչ կ'աղաղակէ, և Հայութեան համար ընտրելագոյն վիճակ մը կը պահանջէ և զանձն կը յորդորէ գործով և արդեամբք արժանի լինել այն փառաց, որոց կը ձգտի ըլձիւքն և բաղձանօք : Իսկ ինչէ նոր գործն և արդիւնք, և ինչ նոր իզձքն և բաղձանք որք իրերաց պիտի համապատասխանեն :

Ահա խնդիր մը որ շատ և շատ հարկ էր որ զիս և զձեզ զբաղեցնէր ի ներկայիս արտայայտելով մեր նպատակին կէտը, և մեր աղգութեան նոր դրից եղանակը, և աղգութեան մը զարգացման բնական եղած ասպարէզը և սահմանը : Սակայն բարեբաղդաբար, սրտէ սիրտ ալ խօսակցութեան եղանակ կայ . և ես չուզելով իսկ մանրամասնութեանց մէջ մտնալ, և այնպիսի խօսակցութեանց ձեռնարկել որք լպրծուն են . և կեղակարծ, տակաւին ապահովեմ՝ թէ կարեսոր գաղափարները ես ձեր մտաց մէջ զարթուցի, և թէ ի ներկայիս որչափ էքդ աստէն որ զիս բարեսրտաբար լսել կը բարեհաճիք, ամենքնիդ ալ հաւասարապէս ունիք միտուրներուդ մէջ մի և նոյն գաղափարները՝ զորս և ես ունիմ : Զեր մեծ ամանութիւնը Հայ երիտասարդութեան անդամներէն է, և ձեր բոլորը աղգասիրաց խումբը կազմողներէն է . միթէ հարկ է երկար խօսքերով ըսել ինչ որ չըսելով իսկ կիմացուի : Հայ երիտասարդութիւնը զդացած է և կը գործէ . առ ի մէ՞ իբր ընդունայնապարծ վարդապետողուսուցանել ճգնիլ ինչ որ արդէն ուսեալ է : Մէկզմէկ կը հասկնամք, եզբարք իմ . փսխանակ այդ նիւթին վրայ երկննալու, աւելի օգտակար կէտերու մեկնաբանութեան ծախեմք մեր ընտիր ժամանակը :

Բաւական կարծեմ երիտասարդութեան ջատա-

գովութիւնը ըրեւ, և իւր իրաւունքը համարձակօրէն պաշտպանեցի, և ոչ ոք կարող է կարծել թէ կարող ըլլամ ես իւփք կորզել մեր ազգային երիտասարդութէնէն իւր փառքը և իւր բազմանաց ալ ձգտումը : Մանաւանդ թէ այնչափ ալ յառաջեցի որ մինչեւ իսկ ուրիշներու վրայ առաւելութիւններ տալ համարձակեցայ, և այնպէս իմն ցուցնել, որ եթէ նոր զարդացում մը յառաջ պիտի գայ յազդիս, զայն ալ պէտք է երիտասարդութենէ սպասել, անկէց պէտք է զարդացումն ակնկալել և անոր յանձնել զարդացման գործադրութիւնը : Կը տեսնեմ և կ'իմանամ թէ իմ այդշափ յառաջելս առիթ պիտի տայ ոմանց կէս ծաղու և կէս կծու հեգնութեամբ ընդդիմաբանել ինձ և ըսել . Եթէ այդ այդ պէս իցէ թողումք ուրեմն ազգութիւնը երիտասարդութեան ձեռքը, և կամ եթէ երիտասարդութիւնը այդշափ կարող է և իմաստուն, զինքն իսկ իւր ձեռքը թողումք, և յայնժամ տաք գլուխներու և անփորձ անձանց առաջնորդութեամբ գործուելիք արդեանց ինչ ըլլալն ալ լաւ կ'իմանամք, և Ս.ստուած տայր որ մեր վնասովք չիմանայինք :

Ա.յդ խօսքերը թէպէտ և ոչ ոք այդ կերպով զրուցել ուզէ, սակայն ստոյգ ևս է թէ հասակնին լեցուցած անձանց խօսքերը և իրենց յարատեւ տըրտունջը և քրթմնջիւնը այդպիսի զրուցաց վրայ կը յածին, և այն անարդանաց աչօք՝ որովք ոք վերէն վար կը դիտէ, տարուօք անձինք թէ ոչ անարդանօք՝ գոնէ սակաւայարդ նկատմամբ կը դիտեն տարուօք իրենցմէ նոււազ եղողները : Իսկ ինձ և մեզ հարկ է ի բաց թողուլ ծայրայեղ պահանջողութիւնները և ծայրայեղ խտրութիւնները . և իմաստուն խոհականու-

թեամբ, որոշել ինչ որ ընտիր է, և կատարել ինչ որ ընտիր է, թէ և կատարեալ չէ, և պէտս ունի զգուշաւոր կիրառութեան և բանաւոր հանդամանաց պահպանութեան : Երիտասարդութեան արդիւնքները յիշեցինք և գովեցինք, ակնկալութիւնները նկատեցինք և դրուտեցինք, ձիրքերը համրեցինք և սիրանալով գովաբանեցինք, բայց չըսինք երբէք թէ երիտասարդութիւնն ինքնիրեն կատարեալ և անթերի ինչ է, որ ոչ պակասութիւն մը ունի, և ոչ ալ զգուշանալու վտանդ, և ոչ ինքզինքը կարդադրելու հարկ : Մանաւանդ թէ ինչ ձիրքեր տուինք մեք երիտասարդութեան . աշխոյժ, զօրութիւն, ազդեցութիւն, մտաց ազատութիւն, և ժամանակին պարագայից յարմարելու փութաջանութիւն : Կը լմննա՞յ արդեօք այս չափով կարեոր ձրից պարունակը . Ոչ բնաւ : Ինչպէս ուրեմն կը նայինք կարծել թէ երիտասարդութիւնը չունի և ոչ ինչ թերի կամ նուազ, չունի ինչ ուղղելի և զգուշանալի :

Ես որ երիտասարդութեան փաստաբան և գովաբան կը կանգնիմ, ևս առաջին կը հրաւիրեմ երիտասարդութիւնը, և ի մասնաւորի Հայ երիտասարդութիւնը, ունկնդիր լինիլ ձանի մը՝ որ կասկածելի չէ իրեն համար և որ կը սիրէ զնա, բայց աւելի քան զնա կը սիրէ զճշմարտութիւն : Եղբա՛րք իմ և երիտասարդակիցք իմ, — եթէ չէք դժուարիր զիս ձեր դասէն համարիլ . — մեր դասը մեծ պաշտօն ունեցաւ ի բնութենէ և յԱրարէն բնութեան, նոր քայլափոխներով մարդկութեան ընթացքը յառաջացնել . այլ պաշտօն որ տրուեցաւ նմա՝ ճիշդ այն կերպով տրուեցաւ, որպէս ոք յանդուգն և յախուռն անձի մը վտանգաւոր և դըժ-

ուարակննիոն գործեր կը յանձնէ և երբ այն վտանցալից գործը կ'աւարտի կը փութայ պաշտօնը ձեռքեն առնել. վասն զի արիութեան ժամանակը լրացաւ և խոհեմութեան ժամանակը սկսաւ, առջինին յաջողակ եղած ըլլալը՝ երկրորդին ալ յաջողակ ըլլալ չենթադրեր: Երիտասարդոք, մարդկային զարդացման ռահաճո՛րդոք, դժուարութեանց յաղթականք, նորութեանց հեղինակը. Երիտասարդոք, ունիք այս բարեմասնութիւնները, ոչոք անոնք ձեզմէ կը կապտէ. այլ մինչ կը ճանչնայք ինչ որ ձերն է, ձեր արդիւնքն և ձեր կարողութիւնն է, գիտցէք ևս ձեր փառքն ալ անզարտ պահել, մի՛ խառնելով յիրս՝ որք ձեր կարողութենէ գերագոյն են և ձեր ձրից անյարմար:

Ինչ միմիայն աւելցնեմ: Ազդս շատոնցուընէ անկեալ է, աշխարհս երկար ժամանակէ աւերակ: Որպէս զի անկեալը կանգնի և աւերակը շինուի, բուռն մտաց, բուռն կամաց և բուռն զօրութեան պէտո ունիմք. ահա պատեհ առիթներ՝ որք երիտասարդութեան հրաւեր կը կարդան ի գործ: Բայց և ունիմք վարչական ասպարէզ մը, ունիմք պահպաննելու արժանի բարեմասնութիւններ, ունիմք խոհեմաբար քննելու պարագայններ. ահա այն կէտերը՝ որոց մէջ երիտասարդութիւնը պիտի ճանչնայ, թէ գերագոյն քան զինքն դաս մը կամ հասակ մը կայ, որ այդ կէտերուն համար աւելի յարմարութիւն ո նի, և պէտք է զայն յարգել և անոր տրամադրութեանցը հետեւիլ:

Սկզբունքները բացատրեցի, իւրաքանչիւր հասակն սեփհականութիւնները որոշեցի, նկարագրեցի երիտասարդութիւնը իւր բարի ձրից ներքեւ, ճշգեցի իրեն գործոյն և ասպարէզին գիծերը, միայն աղ-

գին մէջ աւուրս զըլից համեմատ ձեռնարկեալ և ձեռնարկելի գործերը չամրեցի, կարծելով թէ իմ համը լրա կընար անկատար մնալ, մինչ ձեր մտաց ազատ տարածումը ոչ ոք կարող է սեղմել և ամփոփել: Համդերձ այսու լտել անհնար է. թէ ոչ լիապէս և ամբողջապէս, գոնէ ըստ կարելոյն կատարելապէս՝ հարկէ որ ես այդ կէտերը յիշատակիմ, և յիշատակելով երիտասարդաց գործը և պարտքը ցուցնեմ:

Հայ Երիտասարդոք, չէք կարող այլ ևս երկբայիլ թէ որ ձեզ կը խօսի՝ ձեր վրայ կատարեալ յարգանք կը տածէ և ձեզ համար կատարեալ համակրութիւն կ'զգայ. այդ վստահութեամբ ուրեմն ուն կըն գի՞ք բանիցս, և անկեղծաւոր բարեկամի մը՝ անկեղծ աւեսութիւնները մի՛ անարդէք: Քա՛ւ յինէն զձեզ գործունէութեան յորդորել, զձեզ գործունեայս գիտեմ ես արդէն: Քա՛ւ յինէն զձեզ արիութեան յորդորել, զձեզ քաջարիս գիտեմ ես արդէն: այլ կը յարդորեմ զձեզ զվաւորաբար յանձնապաստանութենէ երկնչիլ, և այդ ախտէն զգուշտնալ՝ որ ձեր հասակին է սեփհական:

Երիտասարդոք կը նմանի, եթէ այսպէս օրէն է ինձ ինքինքն բացատրել, մարդու մը՝ որ թմբրութենէ արթննալով, քովը մէկ մը կը տեսնէ որ իւր գէմ սոսի ձևով կայնած է, սակայն այն մարդը միայն չէ, եակէն ուրիշ ընկերներ ալ ունի որք իրեն պիտի օգնեն ըստ պատեհ ժամուն, սակայն հազիւթէ սթափեալ մարդը կարող չէ ամեն բան մէկէն տեսնել և իմանալ. թնամին միայն և անզէն կը կարծէ, և վրան կը խոյանայ յանձնապաստան արիութեամբ, որ յանդիտութենէ պարագայից կը շատնայ-

Հնար է որ սաստիկ յարձակմամբը թշնամին և իր ընկերները շուարեցնէ և յաղթական իսկ գտնուի , բայց այդ պարագայն իրմէ չէ , այլ թշնամոյն անդիտութենէն և անզգութենէն , ուր եթէ թշնամին արթնութեամբ և զգուշութեամբ պատրաստ գտնուի , յանձնապաստան ախոյեանին ընկճիլը ստոյդ է , վասն զի անհաւասար զօրութեամբ կռուի կ'ելնէ . այդպիսի կռուոյն մէջ պարտութեան որ կողմ իյնալը ինքնին յայտնի ինչ է :

Հազիւ թէ երիտասարդութիւնը կ'սթափի մանկութեան քունէն , յորում մարդկութիւնն անփորձ և անդէտ ամէն խաղերու՝ ձեերու և գործերու , չգիտեր ընկերական կացութեան ընթացքը իմանալ , հազիւ կ'սթափի , և ահա՛ երիտասարդութիւնը կը գտնուի ոսոխի մը դէմ . վասն զի ոսոխն է ամենայն ինչ որ իր դիմաց արձանացած չներէր իրեն , որ ազատաբար յառաջէ և բաղձացեալ յառաջադիմութեան ծայրը համնի : Երիտասարդութիւնն չգիտեր թէ ինչ է այդ արգելիչ ոսոխաց ոյժը՝ թիւը և կարողութիւնը , և այն արխութեամբ որ յանձնապաստան տգիտութեան ծնունդն է , կ'ուզէ ամեն առթի մէջ բուռն զօրութեամբ ուժգնակի յարձակիլ , զգետնել և յաղթահարել ամեն արգելք , և կարծես թէ յական քթթել մտօք տեսեալ և սրտիւ բաղձացեալ ընդարձակատարր յառաջադիմութեան ասպարեզին միւս ծայրը համնիլ , թէ և ամեն կերպ արգելքներ և խոչնդոտներ զայն լեցուցած ըլլան :

Ինչո՞ւ է որ երիտասարդութեան ձեռնարկներէն քիչը միայն իրեն վախճանին կը համնի , և շատերը ձախորդութեամբ կ'աւաշըմին , որով ոչ ամեն առթի

մէջ կարող է երիտասարդութիւնը քննել կամ իմանալ խոչնդակաց զօրութիւնը և թիւը :

Եթէ այնպիսի առիթներու և ձեռնարկներու վրայ խօսուի , որոց ձախողիլը մեծ հետեւանք մը չունենայ , ես դիւրութեամբ պիտի ներեմ երիտասարդութեան՝ որ իւր բերման համեմատ գործէ : Իւր փորձառութեամբ կը սորվի զգոյշ ըլլալ և խոհեմ , և իւր ձախողութիւնք իրեն սանդուխ կ'ըլլան յաջողութեան բարձունքը համնելու . ինչպէս որ արգեամբ ալ կը տեսնեմք կատարեալ հասակի արանց վրայ : Սորա երիտասարդութեան մէջ փորձառութիւն ստանալով , իբր զգուշաւորք և խոհեմք կը գործեն . առաւել հանդարտութեամբ , բայց առաւել ապահովութեամբ , նուազ են ձեռնարկնին , բայց և նուազ են ձախողութիւննին , չունին թէրւառվ խոստացեալ փառքեր և պարձանքներ . բայց և հեռու են գ գոշէին անակնկալ դժբաղդութիւններէն :

Եթէ ըլլան այնպիսի ձեռնարկներ՝ որք ներւոին շլացուցիչ տեսակետովն և գ գոշէին երկիւղալից վախովն կրնան փորձուիլ , առանց ընդհանուր բարւոյն մեծ վնաս մը տալու , ես կ'ուզէի թէ հանդարտագոյն և խոհեմագոյն հասակներ այդպիսի ձեռնարկները երիտասարդութեան բաղձանաց և բերմանց թող տային . ասոնք անտնօրինների պայմանք են փորձառութիւն ստանալու : Որք իրենց փորձառութեամբը այսօր կը պարծենան , թո՞ղ իրենք իսկ խոստովանին , թէ ո՞չ ապագէն սոյնօրինակ երկբայական և յանդգնական ձեռնարկութեանց չնորհիւ ստացան փորձառութիւնը՝ որով այսօր կը պարծենան :

Սնխելքութիւն է , մանաւանդ թէ և անիրաւու-

թիւն, մոռնալ թէ ինչպէս ստացաւ ոք լինիլ ինչ որ է, և չնորհել այլոց որ ըլլան ինչ որ ինքն է, այն ճանբավ որով ինքն եղեւ: Որք փորձառու գիտեն ինք-ղինքնին, պիտի ճանչնան թէ յաջողութեամբք և ձա-խողութեամբք, իյնարդ և ելնելով, ինչպէս ռամկօ-րէն բացատրութիւնը կ'ըսէ, փորձառու եղեն. նոր երիտասարդութիւնն ալ նոյն ճանբէն պիտի անցնի: Պէտք է ուրեմն իբեն ասպարէզ մը բացուի, և այդ ասպարէզը մէկ մը անճնական գործողութեանց շրր-ջանն է, և մէկ մըն ալ այն ազգային կամ ընդհա-նուր գործողութիւնք, որք երկրորդական կրնան ըս-ուիլ. վասն զի ուղղակի և լիտապէս անոնցմէ կախուած չեն ազգային բաղդը և ազգային յառաջադիմու-թիւնը:

Եթի մեք երիտասարդութեան այդչափ ընդար-ձակութիւն կուտամք, երիտասարդութիւնն ալ ամե-նայն դիւրութեամբ և բոլորական յանճնառութեամբ պէտք է մեզ չնորհէ. որ այն իրողութիւնք որք կեն-սական են ազգին համար, և զրոս հնար չէ ներեւին և գ գուցէին ազգեցութեան ներքև թողուլ, պէտք չէ երիտասարդութեան ազգեցութեան ենթարկել. այլ անոնց մէջ երիտասարդութիւնը պիտի վարուի շա-փառութեամբ մը ի մասին որոշողութեան, և իւր սեփիհական մասը պիտի ըլլայ գործակցութիւն՝ որոշ-եալ շաւղին վրայ ընթանարդ, և քաջամարտիկ զին-ուորութիւն՝ հրամանատարին անսարդ:

Այլ ես կ'ուզեմ թողուլ ընդհանուր սկզբանց պա-րանակը, և մօտենալով մեր ազգին վիճակին, և ո-նոր յառաջադիմութեան պէտքերուն, և անոր բաղդին պայմաններուն, ճշդել որչափ հնար է. չայ երիտա-

սարդութեան պարտքերը այդ վերջին նիւթերուն մէջ, որով ինքնին ի յայտ կ'ուգայ ես, թէ ինչ է՝ որ թող-ուած պիտի ըլլայ իւր կատարեալ աղատութեան:

Առե՛ք ազգային վիճակը իւր ամբողջութեամբը. ահաւասիկ մեր խօսից նպատակը. բաժնեցէ՛ք ազգա-յին վիճակը իւր գլխաւոր պէտքերուն. ահաւասիկ մեր խօսից նիւթերը: Այնպիսի իմն բաժանում տալ որ գիտնականաբար կատարեալ ըլլայ՝ մեր խօսից ոճոյն իսկ չյարմարիր. վասն զի գիտնական կաճառ մը չէ այս՝ ուր իմաստասիրական ճշդութեամբ պէտք ըլլայ խօսքերը յարգարել: Ազգը կ'զգայ տակաւին դատի-արակութեան պէտքը. Ազգը պիտի դիմէ տարփանօք լաւագոյն ապագայի մը. Ազգը պիտի առաջնորդուի ընակիր վարչութենէ մը. Ազգը պիտի բարեկարգէ ըն-տանեկան կենաց դիրքը. Ազգը պիտի ստանայ օրի-նաւոր բարոյական կեանք մը. Ազգը պիտի վառուի ազգային կրօնքով մը: Եթէ և ուրիշ նկատողութեան արժանի նիւթեր կան, մեզ շատ է այդչափով գոհա-նալ. ըլլայ թէ կարի իսկ տարածուելով և մեր միտ-քը ցրուելով՝ բնաւ իսկ չամփոփուելու վտանգի մէջ կյ-նամք: Գիտեմ թէ գժուարին մասի մը գուռ կը բա-նամ, սակայն հարկը գժուարաւթիւնները տանելի կ'ը-նէ, և պէտք է որ մտնամ այդ գժուարին մեկնու-թեանց ալ. բայց նախ սուզ ինչ հանդիսատ տալով խօ-սողից և լսողացդ:

Տեա՛րք իմ և Տիրուհի՛ք .

Մարդ մարդու . կը նմանի արտաքին տեսքովն և ներքին կարողութեամբ և բնական կաղմակերպութեամբ . այլ ունի կարողութեան աստիճանի տարրերութիւններ, որովք մարդ մարդէ կը զանազանի . այլ այդ կարողութեան աստիճանէ զատ զօրաւոր կէտ մըն ալ կայ՝ որ որոշողութեան արմատ կը սեպուի . և այս ալ բնական կարողութեանց կրթուին ու զօրանախէ, որ դաստիարակութիւն կ'ըսուի : Ասովէ գլխաւորաբար որ դիտեմք մեք մարդիկներու մէջ դասակարգութիւն մը հաստատել . ունիմք երբեմն այնպիսի անհատներ որք ի բնէ զօրաւոր հանճար և ճարպիկ միտք ստացեալ ունին, սակայն չեմք կարող այնպիսեաց գործեր յանձնել կամ այնպիսիներէն բարիքը ըսպասել, ցորչափ գոնէ անկատար կամ չափաւոր դաստիարակութեամբ մը կրթեալ և գործոց յարմարութիւն ստացած շըլլան :

Հայ երիտասարդութիւնը դաստիարակեալ ասուանել կը բաղձայի . և երբ չորս կողմօ կը նայիմ, և կամ ինձ սովորական պարունակին մէջ կ'ամփոփեմ իմ զննութիւններս, բաւական դաստիարակեալ երիտասարդութիւն մը ունիմք ըսելու համարձակութիւնը կ'զգամ: Բայց երբ իմ հետաքրքիր խուզողութիւնները մեր տեսած և ճանչյած պարունակէն գուրս կը հանեմ՝ կ'ելնեմ քննել այն նորեկ գաղթականները և որ մեր հայրենական երկրէն հոս կը պանդխտին, կը հարցնեմ ուշիմ ուղևորաց՝ որք մեր ժառանգական հայրենիքն կը վերադառնան, կը հաւաքեմ այն տե-

զեկութիւնները՝ որք դժուարին և գալքոնի չեն . ո՞հ, զիա՞րդ կը լքանիմ աշխուժէս . և եթէ մայրաքաղաքիս և գլխաւոր քաղաքաց Հայ երիտասարդութիւնը դաստիարակեալ պիտի անուանեմ, սակայն ընդհանուր առմամբ Հայ երիտասարդութիւնը դաստիարակեալ անուանել չեմ համարձակիր : Դուք, Երիտասարդութիւնը Հայազգիք Բիւզանդեան մայրաքաղաքիս, դուք եթէ անաշառ ըլլալ ուզէք, և ոչ իսկ բովանդակ մայրաքաղաքցի երիտասարդութիւնը կրնայք դաստիարակեալ կոչել . ու՞ր մնաց որ կարենայք այդպէս անուանել Հայաստանցի երիտասարդութիւնը :

Եթէ մեր զօրութեան և կարողութեան աստիճանը և նաև մարդկութեան տեսակէտին ներքեւ մեր արժանաւորութեան աստիճանը, նոյն ինքն մեր դաստիարակութեան աստիճաննէ, ու՞ր կարենամք ուրեմն զետեղել Հայ երիտասարդութիւնը, երբ անոր մեծ մասը անդաստիարակ է բոլորովին, նշանաւոր մէկ մասն ալ այնպէս թերի դաստիարակեալ, որ գրեթէ ոչինչ կը համըուի :

Այդ ցաւալի ճշմարտութիւնը երկու մեծամեծ պարտքեր կը դնէ ձեր վրայ, ո՞վ դաստիարակեալ անհատք Հայ երիտասարդութեան, գիտցէ՛ք ուրեմն և ըստ այնմ ջանացէ՛ք գործել : Ցորչափ արդեան երիտասարդութեան մի փոքրիկ մասը դաստիարակեալ կը համբուի, բոլորին վրայ ծանրացած գործոց բեռը՝ փոխանակ բոլորին վրայ հաւասարապէս բաշխուելու և բեռը թեթևալու և պատասխանատուութիւնը քիչնալու, քիչերու վրայ ծանրանալով կը մեծնայ և կ'աճի : Որք այդ քիչերուն մէջ գտնուելու բաղդն ունին, պիտի գիտնան թէ սակաւք շատերու

տեղը բռնելու համար՝ պէտք ռւնին անձանց վրայ բռնադատութիւն գործածել :

Ասոր հետեւանքն է և միւս պարտքն ալ, այս է, հանգերձեալ երիտասարդութեան կամարդեան մանկութեան դաստիարակուելուն համար զոհողութեանց յանձառու ըլլալ : Այդ դաստիարակութիւնը հանգիստ և հանդարտ գործերէն մէկը չէ, և ոչ ալ հնար է որ չափահառ անձանց գործունէութեամբ միայն ի գլուխ ենէ : Հազիւթէ առնց գործն է համարսարանական և բարձր ուսմանց համար աշխատիլ և աշխատակցիլ, մինչ նախնական դաստիարակութիւնը, որուն մեր Հայաստանցին կը կարուի, զինուորական մրցումմի է ճշմարտուապէս, և որք այն չարագուշակ թշնամոյն դէմ մարտնչիլ կը խիզախեն՝ որ է անկրթութիւն, ոչինչնուազ վտանգաւոր և տաժանելի զինուորութեան մը կը դրաւին, քան նոքա որ սուրերու և ռումբերու դէմ կռուելով կեանքերնին ի կշիռ կը դնեն :

Ծանր և վտանգաւոր գործոց մէջ երիտասարդութեան մասը շատ է, կըսէի ի վեր անդր : Սոյն սկըզբան հետեւողութեամբ կը հրաւիրեմ և կը յորդորեմ զձեզ, երիտասարդք, Հայաստանի դաստիարակութեան հարկաւոր եղած միջոցներու գործադրութեան : Հայաստանի մէջ ուսում ծաւալել . քանի մը տարիներէ ի վեր նշանաբան եղիւ Հայ երիտասարդութեան մայրաքաղաքիս, և գլխաւորաբար քանի մը թաղերու, որոց մէջ կ'ուզէի ձեր թաղնալ յիշելու բաղդն ունենալ : Քանի մը ընկերութիւնք կանդնուեցան որք Հայաբընակ աշխարհի զանազան կողմեցը իրենց առաջարէզ ընտրեցին . և ժրաշան աշխատութեամբ նպաստներ հաւաքեցին, քանի մը աղդանուէր երիտասարդք դաս-

տիարակի պաշտամամբ Հայաստան չուեցին, և մինչեցայսօր երեմիւ չափ վարժարանք կանգնեցան կամ նորոգուեցան նորհիւ Սրարտեան, Գպրոցասիրաց-Սրեելեան և Կիլիկեան ընկերութեանց : Եռամեայ ժամանակէ մը ետքը, այն եռանդը որ առաջ ընկերութիւնները շատցնելու յորդորեց, այսօր փորձառութեամբ զանոնք միացնելու և զօրացնելու կ'առաջնորդէ, և աղզին մէջնոր զօրութիւն մը ստեղծելու : Երիտասարդք, այդ զօրութիւնը ձեր բաժինն է : անոր չորս կողմը համախմբիլ ջանացէք :

Հայաստան դաստիարակութեան կը կարօտի և Միացեալ Ընկերութիւնք դաստիարակութեան վառարանը պիտի ըլլան : Ազգս չունի այնպիսի զօրաւոր և մեծազօր նպաստներ՝ որովք հնար ըլլաց իսկրիյն բաղմաթիւ վարժարաններ կանգնել և օժտել : Ազգը պարտաւոր է լումաներէ գահեկան, և գահեկաններէ քսակ, և քսակներէ գրամագլուխ կազմել և ըստ այնմ գործի ձեռնարկել : Յոդնեցուցիչ և լքուցիչ աշխատանք մի է՝ որուն յովնած անձեր անբաւական են . եթէ համախմբեալ Հայկական Ընկերութիւնն ապագայ արդիւնք մը պիտի ունենայ, զայն երիտասարդութենէ հարկ է սպասել, որ միայն կարող է անխօնջ կերպով հաւաքմանց տաժանելի գործոյն հսկել, և բաժանորդագրութեանց տարածման համար ճիզն ու քիրտնչինայել : Երիտասարդաց, և մանաւանդ մայրաքաղաքացի երիտասարդաց պարտքն է ևս, ցորչափ տեղացի երիտասարդութիւն կը պակսի որ տեղական դաստիարակի պարագը կատարէ, ինքն փութայ ընուլայդ պէտքն ալ, և առաքելաբար շրջի ի Հայաստան, դաստիարակի պաշտօն վարելու համար :

Ինչ որ ընկերութեանց ընթացքն է և ինչ որ ընկերութեանց գործն եղեւ, անաշառ քննութեան ենթարկուելով իսկ, գովեստի պէտք է արժանանան: Այն հմտութեամբք զօրս ստացած եմ նաև օտար Եւրոպական ազգաց մէջ գործուածներուն նկատմամբ, կը համարձակիմ հաստատել թէ Հայ երիտասարդութեան ի մասինս ըրածը՝ արժանի է ամենայն գովեստից, և իբր անօրինակ իմն ձեռնարկ և յաջողութիւն կը նայ փառաւորուիլ նոյն իսկ ամենէն յառաջադէմ աղդաց մէջ: Փորձառութեան պակասութիւնը՝ բնական է երիտասարդութեան. այլ Հայ երիտասարդութիւնը ցուցուց զինքն թէ՝ գործունեայ և եռանդուն, թէ՝ փորձառու և խոհեմ, ոչ միայն ընկերութիւններ հիմնելու և գործելու մէջ, այլ և իմաստութեամբ կառավարելու, և այսօր ալ զանոնք միացնելու մէջ: Պատի՛ և յարդա՞նք ուրեմն Հայ ընկերութեանց վասն դաստիարակութեան Հայ աշխարհի. փա՛ռք և պարծա՞նք Հայ երիտասարդութեան:

Հայ երիտասարդութիւնն, ոչ միայն դաստիարակ է և պիտի ըլլայ, այլ և ինքն միւս կողմէն բարձը դաստիարակութեան կը կարօտի, եթէ այդպէս կը ներէք ինձ կոչել նաև անձնական և անհատական կրթութեան և կացութեան այն մասը, որով ոք իւր ապագային պատրաստութիւնները կը կատարէ: Նախնական դաստիարակութիւնը մանկութեան մէջ աւարտած երիտասարդութիւնն՝ կարող է տալ զայն իրեն յաջորդող մանկութեան, բայց իրեն ալ բան մը կը պակսի տակաւին: Նախնական դաստիարակութիւնը առնելէ ետքը, ուսումնական կամ արուեստական կամ ճարտարական կրթութեան մը կը կարօտի՝ որ իւր վի-

ճակը պիտի ըլլայ, իւր շահը պիտի հայթայթէ և իւր յառաջադիմութեան պիտի օգնէ: Ահա՛, Հայ Երիտասարդք, ձեր ուշիմութիւնը ցուցնելու յարմար ժամանակը: Ոչ միշտ այդ որոշողութիւնը երիտասարդին վրայ կը մնայ, ինչու որ յաճախ ի մանկութենէ ծնողը և խնամակալք մանկանց վիճակը կ'որոշեն և այս ինչ կամ այն ինչ լինիլ կը սահմանեն. սակայն դեռ այս կամ այն ինչ չեղած՝ երիտասարդութիւնը կ'սկըսի, և երիտասարդն երբեմն իրեն որոշեալ ապագայն կը փոխէ, և երբեմն աղատաբար իւր ապագայն կը սահմանէ. բայց միշտ ինքն է որ փութովն և ջանիւք իւր ապագային համար կ'աշխատի, և իրմէ կը կախուի՛ թէ ոչ իւր ապագային ինչ ըլլալը, դոնէ իւր ապագային ինչպէս ըլլալը:

Ստէպ երիտասարդք փայլուն և շողջողուն գործոց ետեւէն կ'ինան, և դժբաղդաբար յաճախ իրենց նախկին որոշման կամ բերման վրայ կը զդիան. այլ որո՞ւն մեղ դնել ի մասինս: Կը խոստովանիմ որ ոչ միշտ կընամ երիտասարդը դատապարտել: Այլ ցորչափ երիտասարդը կարող անձ մը գիտեմ, ուրիշին բարերարելու բաւական, իրաւունք կ'ունենամ իւր իսկ բարւոյն համար իրեն յանձնարարութիւններ ընել:

Գիտեմ, Հայ Երիտասարդք, թէ բարձրագոյն ուսմանց պարապելով և աղատական մակածութեանց հետեւելով, ձեզի ապագայ մը պատրաստելու համար տեղական դիւրութիւն մը չունիք, ոչ պետութէնէն և ոչ ազգէն. բժշկութիւն, փաստաբանութիւն, ճարտարապետութիւն և նմանօրինակ գիտնական արուեստներ կարող չէք դիւրութեամբ ստանալ աստէն,

և որք ասոնց կը փափադին՝ պարտաւոր են ցեղ ցեղ դժուարութեանց յաղթել և այնպիսի միջացներ ունենալ, որոց ոչ ամենայն ոք կարողութիւն ունի: Գիտեմ ևս թէ սովորական արուեստք անպիսի անարդ վիճակի մը մէջ պահուած են, որ քիչ մը կըթեալ և դաստիարակեալ երիտասարդք անկէց կը փափչին: Վաճառականութեան բաղձանքը սկսած է տարածուիլ քաջալերեալ մանաւանդ ի յաջողելոյ ոմանց, որք այդ ճանքով իրենց հանգիստ և փառառոր վիճակ մը կըքցան պատրաստել. բայց և սյս առթին մէջ գոնէ համեստ և չափաւոր դրամագլուխ կը խնդրուի, որուն ոչ ամենայն ոք արքանացած է ի բաղդէն: Պետական պաշտամանց մէջ յօյս և պատիւ աշոււընիդ կը շլացնեն և եռանդեամբ անոնց ետևեն կըլլաք, բայց ոչ միշտ ուրախութեամբ սոյն պաշտամանց մէջ կը մնաք, վասըն զի յաճախ ակնկալութեանց ի դերեւ ենելը և անհաստատութենէ յառաջ եկած հետևանքը զձեղ կը լրուցանեն: Ահա բազմամբովս երիտասարդութեան մէկ մասը դեռ իւր վիճակը որոշած չէ. ուրիշ մէկ մասն ալ ընտրածէն տեսքոհ է. ուրիշ մաս մըն ալ փնտռածին չհասնիր, և մեր Հայ երիտասարդութիւնըն այսօր մեծ խեղճութիւն և շփոթութիւն կը կըրէ ի մասինս:

Յորչափ երկիրը՝ ազգը և տէրութիւնը չեն կրնար ամէն դիւրութիւններ ընծոցել ձեր նեղութեան բոլոր պատճառը դուք չէք, և ես չեմուղեր խստիւ խօսիլ ձեզի հետ, ո՛չայ երիտասարդք, կ'արդահատեմ յաւէտ զձեղ, որ յակամայս կը կրէք և անպարտական զոհեր էք երկրիս յետամնաց վիճակին: Բայց որովհետեւ այդ վիճակին ալ դարմանը մեծաւ

մասամբ ձեզմէ կ'սպասուի, որք արգէն գործունէութեան ասպարէցին մէջ մտած էք, և դամ քանզգան պատասխանառութեան ներքեւ ալ կը մտնէք, ուստի մի՛ անգործ մնայք: Ներկայ երիտասարդութիւնը պէտք է մասնաւոր պարտք մըն ալ ճանչնայ, և արութեամբ պէտք է գործէ: Նլացացիչ, արտաքնայրդար, անհաստատ և դիւրակեցիկ գործերու մոլաթենէն խորշեցէք, ո՛չայ երիտասարդք, և աղդին բոլորովին պակաս եղող մէկ կէտը լեցունել և գարմանել ջանացէք: Բաւական պետական պաշտամանց նորընծաներ կան և պիտի ըլլան. բաւական գըրադրութեան զբաղմամբ կեանքերնին ճարելսւ հետամուաներ կան. գիտնական զբաղմանաց համար աղդին և երկրիս մէջ ընդգարձակութիւնը շատ չէ. իսկ արհեստից ինքզինքնին նուիրողներ խիստ քիչ են, մինչ կարի շատ պէտք էք որ ըլլային: Բայց արհեստ կ'իմանամ յառաջադիմութեան ոգւսյն համեմատ, նորահնար գործարանաց և մեքենայից ձեռնտուութեամբ և նոր գարուս ճաշակաց և ախորժակաց համեմատ: Այսօր արհեստաւորութիւնը կարծես թէ անկիրթ և անդաստիարակ անձանց միայն պահեալ կը սեպուի, և ընական կերպով այսպիսեաց ձեռքը մնացած արհեստը կոչտ ու բիրտ կը մնայ և պատիւ չբերեր արհեստաւորին: Երբ դաստիարակութիւն առած անձեր ձեռագործի կամ արհեստի մը կ'զբաղին, հնար չէ որ իրենց ստացած ճաշակէն և կըթութենէն մաս մըն ալ իրենց արհեստին և գործոյն շփոխանցեն: Այս կերպով միայն Եւրոպէ կրցաւ իւր արհեստից յառաջադիմութեամբը երջանկանալ. վասն զի կըթեալ անձեր արհեստաւորաց դասը սկսան կազմել: Արհեստաներով

հարստութիւն կու դայ ազգին մէջ , արհեստներով հարստութիւն կը բղխի մեր հայրենեաց մէջ , արհեստներով պիտի կարենամք մեք յաղթել այն մեծ ցաւը որով այսօր ազգս կը տառապի ամենուրեք կարօտութիւնը :

Հայ Երիտասարդոք , և դուք ի մասնաւորի , որ կը թութեան սկզբունքը ընդունած էք և դաստիարակութեան բարիքը վայելած էք , մի խիստ երենան խօսքերս ձեղի . երբ զձեղ արհեստաւորաց դասին մէջ խառնիլ կը յորդորեմ : Արհեստից մեր մէջ պակասութենէն է , որ մեր անձնական և ընտանեկան ամեն պէտքերը մեք չեմք կը նարար արդիւնաւորել , և հարկատուեմք միշտ օտար աշխարհներու , անոնց ձեռօք արուեստակեալ նիւթերը գնելով , կամ հարկատու եմք մեզի հետքնակակից ազգաց՝ որք իրենց արհեստիւ մեր դրամը կը հաւաքեն : Հայք այսօր , նաև մայրաքաղաքիս մէջ ուր կը կարծեն թէ յառաջադիմութեան բարձունքը հասած են , շարունակ իրենց անձնական և անական պիտոյից համար օտարաց ձեռակերտները և ձեռագործները կը գործածեն , և Հայուն դրամը Հայուն չդառնայր , այլ միշտ օտարին ձեռք կ'անցնի : Այս նիւթին վրայ բազումք արդէն խորհեցան և դրեցին , և ծերունազարդ հայրն Պօղոս Վարդապետ Պօյնուէրեան մասնաւոր հրատարակութեամք մեկնեց և հաշիւներով իսկ ցուցուց՝ թէ ազգին մէջ «Պործ կայ , գործող չկայ» : Պէտք է որ Հայ երիտասարդութիւնը ուշի ուշով քննէ այդ կէտը . ոչ իբր վերացական ճշշմարսութիւն մը կամ իրմէ օտար նիւթ մը , այլ իբր ուղղակի իրեն պատասխանատութեան ներքեւ ինկած կէտ մը :

Սերտեղական պէտքերէն զատ , հարկ է որ ինկատի առնուին նաև մեր Հայրենեաց պէտքերը : Հայաստան , եղբա՛րք , գիտէք ամենքնիդ թէ արհեստից նշոյն իսկ չունի : Խնչպէս նախնական դաստիարակութեան բարիքը կը փութամք տարածել , պէտք է որ արհեստական դաստիարակութեան պէտքն ալ հոգամք . եթէ առաջնով միտքերը պիտի մշակեմք , երկրորդով ընկերական կենաց պէտքերը պիտի հայթայթեմք : Օտարք երբէք չեն մտածեր մեր հայրենեաց բարիքը . կընան արուեստակեալ նիւթեր տանիլ և թանկագնոյ վաճառելով մեր ազքատիկ հայրենակիցները խարել և թալւել . սակայն արհեստը չեն տանիր երբէք : Եթէ և մեք իսկ չեմք հոգար արհեստ տանիլ , ի՞նչպէս կընամք օտարազգին եպերել իւր այդ ընթացից նկատմամբ : Միւս կողմէն՝ երկիր բերրի է Հայաստան և երկիր արդիւնաւոր , ցարդ կոյս մնացած ոչ միայն արուեստական մեքենայից ժանիքներէն , այլ և նոյն իսկ հոգագործական արօրին թաթերէն : Ով որ այդ երկրին մէջ իւր շահը հաստատել գիտնայ , ապահով եղէք՝ որ երկիրն ալ պիտի գիտնայ իւր բարերարին ջանքը բեղմնաւորել . երանի անոնց որք առաջին անգամ այդ գործոյն պիտի ձեռնարկեն , վասն զի ոչ միայն ազգասիրական պարունակին մէջ գովեստ և պարծանք պիտի ստանան , այլ և շահասիրական պարունակին մէջ իրենց ջանից և աշխատանաց արդասիքը պիտի քաղեն :

Ապահովութեանց պակասութիւնը իբր մշտատեչքմեղանք մեր դիմացը կը դրուի . սակայն ես այդու իսկ չպիտի հանդարտիմ և չպիտի ներեմ որ դուք ալ հանդարտիք : Արդէն գիտէք , եղբա՛րք , թէ Հա-

յաստանի մէջ ոչ ամեն կողմ և ամեն գաւառ անապահովութիւն կը տիրէ . դիտէք ևս թէ աւուրս պարագաները այնպէս են , որ եթէ ուզուի քաղաք մը կամ գիւղ մը ապահովութիւն հաստատուիլ , այսօր անհընար չէ զայն հաստատել , նկատելով Բարձրագոյն Պետութեանս ձեռնտութիւնը , օտար տէրութեանց հովանաւորութիւնը , և ուրիշ միջոցները զորս մեկնել աւելորդ է , վասն զի դուք ձեզէն զայն կ'իմանայք : Մէ՛ մոռնայք ևս յուշ բերել , թէ ապահովութիւնը չկրնար ուշանալ , և կը հաստատուի . և երբ կը հաստատուի , կարող պիտի ըլլամք արդեօք անմիջապէս մեք ալ հարկաւոր անձերը գտնել՝ և միջոցները ունենալ՝ և հիմնարկութիւնները կատարել ի Հայաստան՝ արուեստից և ճարտարութեանց հաստատութեան և զարդացման մասին : Եթէ այդ երջանիկ օրը այսօր եղած ըլլար , և վաղիւ գործոյն ձեռնարկելու պարտքն և առիթը զդայինք , — ամօթ է խոստովանիլ , բայց և միանդամայն պարտք է ստոյգը խոստովանիլ , — ազգս կարողութիւն չեր ունենար իւր պարտքը կատարել : Հապա ուրեմն , Երիտասարդք Հայազգիք , ձեր պարտքն է զգալ այդ պէտքը . ձեր պարտքն է ձեռնարկել դարմանին . ձեր պարտքն է այնպիսի գործառնութեանց ձեռնարկել որ վերջէն կարող ըլլաք սոյն նըսպատակին յարմար գործողներ և գործառներ և գործիներ ըլլալ . Այս օրուընէ ուրեմն մեռափ և պաճուճաղարդ զբաղանաց և անհիմն գործոց բաղձանքը և սէրը թօթափեցէք . և դուք որ կրթեալէք և դաստիարակեալ , դուք ձեր ձեռքը առէք արհեստից մեծ զօրութիւնը , ճոխութեանց մեծ աղբիւրը , ազգային կարողութեան մեծ գաղանիքը . եղէք աղղին ձերում

բարեբարք , և դուք ալ կը բարեբարուիք անշուշտ ձեր բարեբարութենէն , նաև նիւթական արդեամբք և վայելիւք :

Չեմ անդիտանար թէ այդպիսի մեծամեծ իրազութեանց մէջ մտանաւորաց ճիգը և գործը կզզիացեալ մնացած ատեն՝ ապարդիւն կ'ըլլան . ուստի և ընկերութենական զօրութիւնը կը պարտաւորի իւր հովանաւորութիւնը տարածել : Նախնական դաստիարակութեան համար ուրախութեամբ նոր մեծ կեդրոնի մը հաստատութիւնը յիշեցի Միացեալ Ընկերութեանց նորհիւ : Այդ բարձր և իրական դաստիարակութեան համար ալ նոր կեդրոն մը կը ցուցուի մեզ ի հեռուստ՝ Բարեգործական , Տնտեսագիտական , կամ թէ ուրիշ մէկ անուամբ մը կազմուելիք Ընկերութեան կամ Միաբանութեան հաստատութեամբ , որուն վրայ զօրաւոր միարեր կը յոգնին 1878 տարուընէ է վեր . այլ գեռ գործնական ձև և գործադրութիւն չստացաւ : Օրերը կ'անցնին և շահաւոր ժամանակը կը սահի , կարծեմ թէ ատենը հասած է՝ որ այդ գործոյն ալ ըսկը զբնաւորութիւնը և արդինաւորութիւնը տեսնելու բաղդն ունենամք . և ինչպէս որ Միացեալ Ընկերութիւնը հիմնական դաստիարակութեան կեդրոն մը ըլլալ սահմանուած են , այդպէս և այս միւս նոր և զօրաւոր Միաբանութիւնը՝ նիւթական և արհեստական դաստիարակութեան կեդրոն ձևանայ :

Ազգին պէտքերը կ'աճին աստիճանաբար՝ որչափ բարձրագոյն և մերձաւորագոյն ապագայ մը կը ոկտիմք նշմարել մեզի համար , և կը յուսամք թէ Հայութիւնն ոչ ևս կրնայ անկեալ և կործանեալ մնալ ի վերայ երկրի :

Արդէն շարժման նշանները տուաւ , մանաւանդ թէ ներքին շարժումն ալ սկսաւ . օտարք իւր ձրից և կարողութեանց վկայեցին , և հետազննինք բարեյոյս կարծիքներ յայտնեցին իրեն վրայ : Մեք իսկ մեր վրայ սկսանք աւելի վստահութիւն ունենալ . հաստատեցինք և պնդեցինք յանդիման աշխարհի թէ ազգութիւն մի եմք բոլոր կարևոր ձրիւք ճոխացեալ . ինդրեցինք և թախանձեցինք որ մեր ազգութիւնը ձևոյ մը ներքե ճանցուի , և ի ծայր ընդարձակ կայսերութեանս , որոյ հովանոյն ներքե կը գտնուիմք , Հայ ժողովուրդը գտնայ իւր երջանկութիւնը , և վարչութեան լեզուովն և անձեռով սոյն կէտը ապահովուի . վասն զի այս միայն է Հայ ժողովրդեան և Հայ գաւառաց բարօրութեան և հանդարտութեան բարիքը չնորհելու միջոցը : Եթէ յառնէին մեր հարք և լսէին մեր սոյնօրինակ բարբառը , հրճուալից ապշութեամք պիտի լեցուէին անշուշտ . այլ աշխարհ որ զմեզ լսեց՝ չզարմացաւ , անօրինակ չդատեց , անիւրաւ չվճռեց մեր խօսքը : Բազմազան շահերը և նախանձընդէմ պետական տեսութիւնները կշռեց Եւրոպէ , և մասամք միայն գործադրեց առ այժմ մեր խնդիրը : Մեք չկասեցանք և չպիտի կասիմք . մանաւանդ որ հաւատք ունիմք քաղաքական գործոց ընթացից վրայ . թէ հակառակութիւնք և զլացմունք ոչ թէ խնդիր մը և պահանջում մը կ'ոչնչացնեն , այլ մանաւանդ թէ զայն կ'աճեցնեն : Կաե տերեք թափեալք և ոստք քանցեալք , արմատին ոյժը կ'աւելցունեն և ոչ թէ բոյսը կը ցամաքեցնեն : Այդ է մեր հաւատքը , Հայաղդի Եղբարք . այդ հաւատքին համեմատ կը գործեմք ծերք և արք , երիտասարդք և մանկունք , որ և ազ-

գասէր ունկնդրացդ գաղտնիք մը չէ : Այդ ապագայ յին նկատմամք ալ երիտասարդութեան գիրքը և պարտքը մեկնաբանել կ'ուղէի . սակայն , եթէ օրէն է անկեղծաւոր յայտարարութիւն մը ընել , շուարեալ եմինչ ձեռով խօսիլ և ինչ ոճով իմ բուն միտքս բացատրել , որ ոչ օրինաւորութեանց սահմաններուն գէմ մեղանչ չեմ , և ոչ ալ իմ ներքին զգածմանցս բացատրութենէն բան մը զեղչեմ :

Դժուարին գործոյ մը առջև երիտասարդութեան պարագը մեծ է , վասն զի իրեն մամն է գժուարութեանց գէմ յաղթանակ կանգնել : Ինչ է այսօր մեր ապագային համար բռնուելու ճանբան : Եթէ եղած հարստահարութեանց ձայնը Օգոստավառ Կայսեր հացնելով , եթէ եղելութեանց վէպը հովանաւոր պետութեանց հաղորդելով , եթէ կանխատես զգուշաւորութեանց մէջ քաղաքադիտական ձեերը պահպանելով ամենայն ինչ աւարտէր , թերեւս երիտասարդութեան գործչէր գտնուէր , և ազգային վարչութիւնն իւր գլխովն և անդամովք և գործակցօք ամեն բան կարող կըլլար ինքնին աւարտել : Սակայն ո՞ չգիտեր թէ այսչափով գործն չլմնար . և այդ միջոցներն թէպէտ հարկաւոր , թէպէտ զօրաւոր , թէպէտ շահաւոր , սակայն մինակ մնացած ատեննին արդիւնք չեն կրնար պտղաբերել : Ստոյդ է որ ճանապարհ յորդեցին , նախապատրաստութիւն կատարեցին , սակայն ամեն չայուն խելքը կը հանի՛ որ եթէ աւելի ինչ չգործուի միջոցները պատրաստելով և խոչնդունները բառնալով , ելքն կեղակարծ կը մնայ :

Ինչ բառ գործածեմ , որ միտքս յայտնեմ . ինչ պէս իմացնեմ թէ պէտք է որ իւրաքանչիւր Հայ սիրտ

անհատաբար զգայ իւր ազգային արժէքը, և անոր գործակցելու հարկը : Խնչպէ՞ս զրուցեմ որ հասկցնեմ՝ թէ Հայուն սիրտէն պէտք է ելլայ յուսաբեկ զդած-մանց տպաւութիւնը՝ որով ստէպ իւր ձեռուըները կը կապուին և կարեսը չդորձեր : Խնչպէ՞ս խօսիմ որ համոզեմ՝ թէ այդ գործերուն մէջ ամեն բան ու բիշէն յուսալ անխելքութիւն է . և ով որ կ'ուզէ յաջողիլ, նախ ինքնիրեն պիտի օգնէ՝ որ ուրիշի օգնութեանն ալ արժանանայ : Խնչպէ՞ս բացատրեմ՝ թէ ազդայնութեան և ազգային դրից առաջին տարրը՝ այն ուժով և հաստատութեամբ իւր կամաց մէջ զդալն է : Խնչպէ՞ս հաստատեմ՝ թէ սրտի և մտաց մէջ ըդդացեալ և իմացեալ ազգային ապագայն՝ գեղեցիկ նկարի և գեղեցիկ նկարագրի մը ճշմարտութենէն տարրեր իրականութիւն մը չարդիւնաւորեր : Խնչպէ՞ս այդ բաները մեկնեմ, ունկնդի՛րք իմ, առանց օտարութի մտաց ամբաստանութեաններքև իշնալու, բայց և միանդամայն առանց խօսիցս և ըղձիցս ազդուութենէ նշանախեց մը պակսեցնելու :

Արդահատեցէ՞ք իմ վիճակիս վրայ, խօսիցս տկարութեան դուք օգնեցէ՞ք, և ինչ որ ես չեմ կրնար ըստ արժանւոյն բացատրել. դուք ձեզէն իմացէ՞ք, կ'աղաւեմ, դուք ձեզէն ձեզի մեկնեցէ՞ք : Այլ հոն մի՛ դադարի՞ք և մեկնութեամբ և իմացողութեամբ մի՛ շատանայք, վասն զի գործելոյ տաենն է . «Ահա՛ ժամանակ ընդունելի, ահա՛ օր փրկութեան» :

Ունի՞ արդեօք մեր այժմեան երիտասարդութիւնը այն հստին՝ զոր ընդ ազօտ գոնէ կրցայ ձեզի իմացնել : Ուր է՞ր թէ կարենայի և համարձակածայն բարբառով գոչէի, Այս՝ այս այդ հոգին ունի : Աս-

կայն ես չեմ ուզեր ո՛չ զձեզ խաբել և ո՛չ ես ինքն խաբուիլ : Մեր քաղաքացի առոյդ երիտասարդները խօսից մէջ շատ եռանդով վառած կը տեսնուին . այլ ներեցէ՞ք ինձ յաւելու ևս, թէ ըրածնին ուրիշ բան չէ, եթէ ոչ ըստ առակին, «Սենեկի մէջ սուր շողացուցանել» : Իսկ որք բուն իսկ գործոյն տեղը կը գտնուին, որովհետև աւանդական վհատութենէ զատ ուրիշ զդածում չունին, հարստահարող կեղեքչին թողած հետքերէն զատ բան չեն տեսած, յուղկահար աւաղակին հասուցած մնաներուն դարման մը չեն նշմարած, Խնքնակալ Պետութեանս տուած խոստմանց և խօսած քաջալերութեանց ձայնն իրենց չէ հասած, քաղաքական մասին մէջ արուած ապահովութեանց ազդեցութիւնը չեն իմացած, դարերուն փոփոխութեամբ և հոլովմամբ իրաւանց և արդարութեան ստացած արտաքին ոյժը չեն հասկցած, անցնիւր ազդայնոյ և քաղաքացւոյ իր երկրին խաղաղութեան և իւր իրաւանց պաշտպանութեան համար անձնական պարտաւորութիւններ ունենալն չեն լսած . այդ առոյդանձն երիտասարդութիւնը, կ'ըսեմ, որոյ տեսքըն և կայտառութիւնը կ'արդարացնէ ըստ ամենայնի Քածայն Հայոց աւանդական փառաւոր անուանակաչութիւնը, որ և եթէ զգայր և գիտնայր, ոչ որպէս զայլսն ձեռն զդուուով կը մնայր, երկիւղալից անգիտութեան և տգիտական երկիւղածութեան ներքեւ անգործ կը մնայ և չգործեր ըստ իւր կարողութեան, չգործեր յօդուտ Հայ ապագային :

Այդպէս գիտութիւն և զօրութիւն, կրթութիւն և կարողութիւն իրարմէ հեռու մնացած ըլլալով և միանալով, երկուքն ալ անօգուտ կը մնան Հայ երիտա-

սարդութեան ձեռքը՝ նկատմամբ Հայ ազգայնութեանն մինչ իրարու խառնեալ, ազգու և նշանաւոր արտադրեալ մը հանել կարող էին : Այդ գործն ալ գաստիարակեալ Հայ երիտասարդութեան պարտքերէն մին է, վասն զի իրեն աշխոյժը, և իրեն տոկուն գործունէութիւնը միայն կարող են ի գործ դնել պահանջուած միջոցները : Աղէ, Երիտասարդք Հայազգիք . միթէ չէք և գուք սերունդք նոյն նախնեաց, միթէ և գուք չէք պատրաստուիր վայելել նոյն ապագայն որուն ազգն բոլոր կ'սպասէ : Ինչպէս կ'սպասէք հնձել եթէ չք սերմաներ : Դուք որ կըթութիւն և գիտութիւն ունիք, մատիք յառաջ. հաղորդեցէք ձեր ունեցածը ձեր երիտասարդակից եղբարց՝ որք զօրութիւն և կարողութիւն ունին : Հայաստանի Հայ երիտասարդութիւնն ալ թօթափէ իւր վրայէն նկուն վիճակի փոշին, ճանչնայ զինքն՝ ինչ որ է, ճանչնայ զինքն՝ ինչպէս պիտի ըլլայ, ճանչնայ ապագայն որուն ազգն կը յանկայ, ճանչնայ այն պարտքը զոր այդ ապագային համար ունի . գիտնայ ճանչնալ, գիտնայ և յուսալ, գիտնայ գործել, գիտնայ և արդիւնաւորել . և այն գեղեցիկ ապագայն զոր մտօք կ'երեակայեմք և որուն սրտիւ կը բաղձամք, իրօք ևս ստանամք:

Երիտասարդութեան գործունեայ դեր մը սահմանեցինք կատարել . բայց չբաւեր ձեռոս ունենալ ի գործ, պէտք է ևս գլուխ ունենալ ի խորհիլ և յառաջնորդել . և այդ գերը վարչութեան սեփհական է : Վարչութիւն անուամբ չեմ ուզեր իմանալ բայցառար կեդրանական վարչութեան լրումը կազմող Կրօնական և Քաղաքական ժողովոց Խառն ձեր՝ Պատրիարքի մը նախազահութեան ներքեւ . այլ կը տարա-

ծեմ այդ անունը առ այն ամենայն պաշտօնեայ կամ պաշտօնատէր, խորհուրդ կամ ժողով որ ազգային մատակարարութեան ձեռյն կը մասնակցի . ազգային Ընդհանուր ժողովէն սկսեալ, մինչև գաւառաց մէջ գիւղօրէից Թաղական խորհուրդները, Պատրիարքէ սկսեալ մինչ ցվերջին Աւագերէցս՝ ի գիւղօրէս որք տեղական վարչութեանց կը նախագահէն : Աւելցուր այս ամենուն վրայ ընտրողական և ընտրելիական իրաւունքները, ուստի սահմանադրական սկզբանց համեմատ վարչութիւնն ծնունդ կ'առնու, և իբր թէ վերստին ի նոյն կը վերագառնայ համարատուութեան պարտքովը : Աղջային գոյութեան մէջ վարչութիւնն էական մէկ մաս մըն է . և Հայ երիտասարդութեան վրայ խօսած ատեննիս, հարկ է որ անոր՝ վարչութեանց հետ ունեցած յարաբերութիւններն ալ մոռացութեան մէջ չըժողումք :

Յորչափ ըստ Սահմանադրութեան ընտրողէ քըսան և հինգամեայ և ընտրելի երեսնամեայն, և ըստ մեղ երիտասարդութեան սահմանը կը փակեն քառանամեայք, հնար չէ երիտասարդութիւնը վարչութենէ հեռու բռնել ըստ ամենայն մասանց, մանաւանդ որ շատերու բերնէն ալ կը լսեմք թէ վարչական մարմինք կը վերանորոգին երիտասարդաց մամնակյութեամբ, թէ օրէնսդիր ժողովոյ և թէ վարիչ պաշտօնէից նկատմամք . մինչև իսկ պատրիարքական բարձը իշխանութիւնը յանձնուեցաւ մեր Աղջանուէր Հօրն Երանաշորհ Տեառն Տեառն Ներսիսի, մինչդեռ յերիտասարդական հասակին կը զանուէր, որպէս զի երիտասարդական գործունէութեան ձիրքն ալ իրեն հետ բարձրանայ ի բարձանորհ աթոռ պատրիարքա-

կան . թո՛ղ զայլ՝ որ նօրս իշխանութեան ժամանակ՝ և նաև յառաջադոյն , ուրիշ ազգային իշխանութեանց և աստիճանաց կոչուեցան իրենց երիտասարդական հասակին մէջ , և ազգային գործոց մեծապէս ձեռնտու եղան իրենց աշխուժիւ և իմաստութեամբ :

Ոչ ոք կ'ուրամայ երիտասարդութեան կարողութիւնը և երիտասարդութենէ ակնկալեալ աշխոյժ գործունէութիւնը՝ և կ'ընդունին ամենեքին թէ մեծապէս օգտակար կրնայ ըլլալ խառնել զերիտասարդը ի գործո վարչականո : Չուզելով իսկ հեռանալ այն կարծիքներէն՝ որ այսօր տարածեալ են , և տարածեալ ըլլալովնին հեղինակութիւն կ'ստանան , չուզելով նաև նուազել իւրի երիտասարդութեան պարծանքը և արդիւնքը և գործունէութեան ասպարէզը , տակաւին չեմ յորդորեր երիտասարդութիւնը որ նոյն բուռն զօրութեամբ՝ որով զինքը յօրդորեցի ազգային գաստիարակութեան և ապագայ վիճակին աշխատիլ , հետամուտ լինի ևս վարչութեան աթոռները և պաշտօնները գրաւել , և այդ կերպով ջանալ յօդուտ և ի նպաստ ազգային յառաջադիմութեան ի պաշտօնէ գործել :

Արդէն մինչև երեսնամեայները , որ է ըսել երիտասարդութեան առաջին կէոր , ըստ Սահմանադրութեան իրեն դիմացը փակեալ կը գտնէ պաշտամանց գուռները . իսկ միւս կէսին համար ես յորդոր պիտի ըլլամ , որ բարձանքով այդ պաշտամանց ետևէ չըլլայ : Պաշտամունք՝ որչափ թեթև և սովորական , տակաւին իրենց հետ պատասխանատուութիւն մը կապուած ունին , և հետեւանաց տեսաւթեամբ ձեռնարկութեանց մէջ դանդաղութիւն կը մուծանեն , ուրի-

շին ընելիքը քննելու և նախատեսելու պարտաւորութեամբ՝ յաճախ անձնական գործունէութիւնը կը դադարի , և խոհեմութեան խրաները կատարելու համար՝ աշխուժին չիղերը կը նուշղին : Երկու բան մէկ տեղ ընել անհնարէ : Փորձով իսկ տեսած եմ , և դուք ալ հարկաւ նկատած էք , թէ ամենէն վառվռուն երիտասարդը՝ երբ պաշտօնի մը գլուխը կը դրուի , յանկարծ կը փոխուի , հնացեալ խոհեմ անձի բնաւորութիւնը և յատկութիւնները կ'զգենու : Այդ ալ ամենէն բնական հետևանքն է , վասն զի նովին իսկ որ պաշտօն մը կ'ստանձնէ , մէկէն պատասխանատուութեան ծանր բեռին տակ կը մտնայ , մնացեալ ծանր հետևանքներով մէկտեղ՝ զորս արդ ևս կը համըէի :

Չեմ գժուարիր երիտասարդի մը պաշտօն յանձնուած տակն , այլ միայն կ'ըսեմ թէ պաշտօն յանձն առնոյլ երիտասարդը նովին իսկ երիտասարդութենէ գործ կ'ենէ , և առն կատարելոյ գործերը և յատկութիւնները իրեն կը սեփհականէ . երիտասարդութեան համար կորուստ մըն է , մանաւանդ երբ երիտասարդութիւնը մերինին պէս գեռ տկար է թուով և զօրութեամբ և զարգացմամբը , և ոչ իսկ իւր գործոյն կը բաւականանայ . ուր քառամսամեայն անցուցած անձինք բաւական թուով , կարողք և փորձառուք , այլ որ ոչ կարեն երիտասարդոց գործերը կատարել , շատ աւելի դիւրութեամբ և յարմարութեամբ վարչական պաշտօնները կրնան ստանձնել : Գործերը կը բաժնուին , գործովք կը շատնան , ամեն գասէ և հասակէ անձինք պիտանի կրնան ըլլալ , և աս ալ իբր ընկ անտեսադիտական սկզբան հետևում մը նկա-

տուած ատենն իսկ , մեծ ծանրակշռութիւն կ'ստանայ և խոհական մոտաց ընդունելութեան և հաւանութեան կ'արժանանայ :

Ոմանք մեծ ինչ կը կարծեն առաջարկել , իրելով որ ընտրելեաց համար սահմանեալ երեսնամեայ հասակը գոնէ ցքան և հինգ իջեցուի , որպէս զի աւելի աշխոյժ տարր մը ազգային պաշտամանց մէջ մուծուի : Ես հակառակը կը կարծեմ բոլորովին , և կը դատեմթէ իմաստութեամբ գործուած է այդ հասակը սահմանուած ատեն . որոյ իմաստը ոչ թէ քսան և իննամեայն կամ քսան և հինգ կամ նաև քսան և միամեայն անկարող հրատարակելէ ազգային պաշտօն մը ստանձնելու , այլ յաւէտ անտեսագիտական առմամբ և ընդհանուր օդտին տեսութեամբ , պատասխանատուութեան ենթարկեալ տաղտուկ և հանդարտ պաշտօններէն , աւելի առոյդ երիտասարդները հեռացնել՝ որ ազգային յառաջադիմութեան աշխոյժ գործաւորներ ըլլան : Իսկ օրինական արգելքը երիտասարդները փորձութենէ ալ կը պահպանէ , զի եթէ դուռը բաց ըլլար , շատ կարող երիտասարդք կրնային պաշտամանց առերևոյթ հրապուրանքէն խաբուիլ , և անոնց հետամուտ ըլլալով իրենց սեփհական գործունէութիւնը խափանել : Չըլլայ թէ երիտասարդութիւնը մեծ բարենորոգում մը պահանջել կարծելով աշխատի սահմանադրական ընտրելիութեան տարիքիննուազումը պահանջել : Ամենայն ոք որ ճշմարիտ ազգաէր է , կարծեմթէ իմ համարձակ խօսիցս և յայտարարութեանցս կը ձայնակցի . բաւական է որ երիտասարդութեան երկրորդ կէսը , այն որ աւելի այրութեան մօտ է , երեսնամեայէն ցքառամնամեայն ենթակայ է

պաշտօնատէր լինելու , ինչ որ սահմանադրութիւնը արդէն շնորհեց ամենուրեք , մեք ալ յարգեմք . բայց գոնէ առաջին կէսը ամբողջաբար երիտասարդական գործունէութեան պահեմք : — Հեռու ուրեմն պահէմք երիտասարդութիւնը հասարակային գործոց մասնակցութենէն : — Ես ինձէն կ'իմանամթէ այդ հարցումը բնական հետեւանք մի է նախընթացաբար զրուցածներոււ : Սակայն ես չեմ կարծեր թէ հասարակային գործոց մասնակցութիւնը սոսկ սահմանադըրական պաշտօնավարութեան վրայ կայացեալ ըլլայ , և առանց ասոր հնար չըլլայ հասարակային գործոց մասնակցիլ : Ինչ են ուրեմն ազգային յառաջադիմութեան համար թափուած ճիգեր , դաստիարակութեան համար եղած աշխատութիւններ , հրատարակութեանց և մամլոյ համար տրուած փոյթեր , գիտութեանց և մակածութեանց ստացման համար եղած ջանքեր , արհեստից զարգացման և տարածման համար հոգեր և քրտինքներ , ազգային հոգւոյն զօրանալուն և իրականանալուն համար կերպ կերպ հնարքներ . արդեօք այս ամենայն և ասոնց նման աշխատանքներ չեն բաւեր , որ հասակ մը իրեն գործունէութեան ասպարէզ , ներքին գոհունակութեան պատճառ և հասարակային գործոց մասնակցութեան առիթ ունենայ :

Բայց ուրիշ մասնակցութիւն մըն ալ կայ , այն է ընտրողութեան իրաւունք . ամէնէն մեծ իրաւունքը՝ որով ոք ազգային պաշտօնավարութեանց կը կոչէ այն անձը՝ որոյ սկզբունք , դաղափարք , ճիրք , արդիւնք և բարոյական յատկութիւնք ոչ միայն զինքն արժանի կը նեն բացարձակաբար , այլ և զինքն յարմար դատել կու տան ժամանակին և հարկին պարագայից համե-

մատ : Ես երիտասարդութեան համար ամբողջ կուզեմ այդ իրաւունքը , և ոչ իսկ կրնամ շատանալ քըսան և հինգամեայ միայն տալով դպին , այլ կը խընդրեմ , որ ամենեքին որ քսանամեայ հասակնին լրացունելով երիտասարդութեան մէջ կը մտնեն , անմիջապէս ընարողի իրաւունք ստանան . ընտրողութեան համար դըուած ուրիշ պայմանները թեթեան ըստ կտրի , ծանրացնելով միայն դաստիարակութեան պայմանը , որ ընտրող չկարենայ ըլլալ ոք , որ հրաւիրագիրը չդիտեր ընթեռնուլ և ստորագրութիւնը չգիտեր դնել ընտրութեանց աղիւսակին վրայ : Այդ կէտերը հոս չեմ կրնար օրինաւորապէս առաջարկել . բայց ուխտիւք կը խնդրէի որ օրինաւորապէս առաջարկուէին և օրէնսդիր իշխանութենէ ընդունուէին : Իմ կողմէս կը յաւելում յօրդորել երիտասարդութիւնը՝ որ իւր ընտրողական իրաւանց նախանձախնդիր ըլլայ և ջերմ գործադիր , Այսու բաւական մասնակցութիւն կըստանայ հասարակային գործոց մէջ , մասնավարութիւն մը որ չկապեր իւր ձեռքը , չարգիւեր իւր սեփհական աշխատութիւններէն , կը կրթէ զինքն խոհականութեամբ դատել ազգային գործոց ընթացքը , և արթուն կը պահէ պաշտօնալարները իրենց գործակալութեան մէջ : Այնչափ աւելի արթնութեամբ կը գործէ ոք , որչափ աւելի գիտէ թէ բազմաթիւ և արթուն աչքեր իւր վրան կը հսկեն . Ակնառութիւն և ծառայամութիւն և մասնաւոր շահեր հեռի մնան քուետովներէն . միայն արժանիքը և հասարակային օգուտը որոշէ ընտրելիները : Երիտասարդութիւնը որ վարժ չէ իսկ անձնական շահերու ընթացքին հետեիլ , յարմար է ընարողական իրաւանց գործածութեան . և

մինչև իսկ պիտի ըսեմ թէ իւր մասնակցութիւնը եղանակաւ իմն հակալշիռ կը կանգնի ազդեցութեանց այրութեան և ծերութեան , որք աւելի հանդարաօրէն կը գործեն , բայց և աւելի հանդարտութեամբ շահուց հաշիւները գիտեն կատարել : Ահա յայտնապէս և անկեղծօրէն իմ կարծիքս երիտասարդութեան վրայ , ազգային վարչութեան հետ ունեցած կամուննենալիք յարաբերութեանց և մասնակցութեանց նկատմամբ : Կը յուսամ թէ ո՛չ երիտասարդութիւնը վշտացուցած և ո՛չ այրութիւնը նախանձեցուցած պիտի ըլլամ իմ համարձակ յայտարարութեամբքս :

Կարծեմ թէ խօսքս կատարեալ չկրնար ըսուիլ , եթէ երիտասարդութեան հրապարակային և հասարակային կենաց և գործոց քով , չդնեմ ևս ինչ որ իւրաքանչիւր երիտասարդի անձնական յատկութեանց և բարոյական կենաց կը վերաբերի . մանաւանդ զի՞ ինչ որ անձնական բարոյականութեան յատուկ է , զայն իբր լոկ անձնական և ազատ կամեցողութեան գործ մը նկատել հնար չէ : Իւրաքանչիւր երիտասարդի հաւասարապէս հասարակ եղող գործ մը , բազմադի հաւասարապէս հասարակ եղող գործ մը , բազմանալովը և կրկնուելովը իբր անխուսաբելի օրէնք կըլլայ , և ընդհանրանալովը հասարակային գործոյ կերպարանը կ'զգենու : Ինձ անհնար է բոլորովին իսկ ատեղարանը ձեր թօթափելով յանկարծ սրբազն բեմբանացի կերպարանը զգենուլ և կատարելապէս բարոյականութեան ասպարէզին մէջ մտնել . ո՛չ տեղս կը ներէ ինձ զայդ , և ո՛չ ալ ժամը , որ բաւական ձեր ուներէ կը ներութիւնը յոզնեցնելէս ետքը , այնպիսի նիւթմըն ալ բանամ , որ ըստ ինքեան իսկ պայծառ և յըտակ միտք և իմացողութիւն կը պահանջէ :

Ապահով եղէք, ունկնդիրք իմ, չեմուզեր խօսից ձեւն և ոճեն զատութել. կը թողում ուրիշ առթի և տեղւոյ և ուրիշ ազգողագոյն խօսից տէր սրբազան բեմբասացից՝ քրիստոնէական և բարոյական կենաց պարագերը բացատրել, և մի առ մի մեկնաբանել և հաւասարել զայնս այն սկզբամբք և փաստիւք, որովք մեր դաւանողական և բարոյական հաւատքը կը զօրանայ և կը փառաւորուի: Ես միայն պիտի յիշեցնեմ ձեզ՝ պիտի յիշեցնեմ՝ և ոչ աւելի, — թէ Հայ երիտասարդութիւնը երբ իւր բնական աշխուժիւ և նորաբորբոք եռանդեամբ արշաւասոյր կը դիմէ ի դէմ եղեալ նպատակն աղդային յառաջադիմութեան. չը կրնար ըկ բնական և քաղաքական կենաց և գործոց հետամուտ ըլլալով՝ անարդել և առ ոչինչ դրել այն բարոյական կեանքը՝ որով մարդկային ընկերութիւնք կը կապուին և կը կազմուին: Աղէ՛, նկարագրէ՛ մտացդմէջ մարդկային ընկերութիւն մը, թէ բարդաւաճեալ քաղաքի բնակութեան մէջ և թէ՛ վայրենի անտառին հովանոյններք. նկարագրէ՛ մարդկային ընկերութիւն մը՝ որ ուրիշ լծորդող յօդ մը չունենայ բայց եթէ իշխանական սաստը, բռնադատական միջոցները, օրինաց գիրը և մեքենայակերպ մարդիկ՝ որք շարժիչ աղդեցութեան մը գրդմամբ և անխախտաբար՝ գծագրեալ շրջանը կատարեն կամ սահմանեալ գործը արդիւնաւորին: Ունեցա՞ր արդեօք մարդկային ընկերութիւն մը. Ո՛չ, եղբարք իմ. աւելի իմաստութիւն և աւելի օրինապահութիւն կայ, եթէ այսպէս կրնամ խօսիլ, մեծակառոյց գործարանի մը բազմաթիւ և բազմազան գործեաց մէջ, որք իրարու կապակցեալ մեծահրաշ գործողութիւն մը կ'արտադրեն, անմաքուր ցորենը ըն-

դունելով եփուն նկանակ մը գուրս կու տան, անզուտ չերամը կ'ընդունին և ընտիր կերպաս մը կը դարձնեն, հնոտեաց կտորները կ'առնուն, և մաքուր ընտիր թուղթ կ'արտադրեն, որք ձայնի մը կը հպատակին և աղդեցութեան մը ներքեւ կը գործեն, որով և անտեսանելի կաթսային շոգիէն ոգեսորեալ մինչև հեռաւոր տեղ մը զետեղուած մանր գործին՝ զիտէ ինչ պիտի ընէ և չմխալիր իւր գործոյն մէջ: Այդշա՞փ օրինապահութիւն և այդշա՞փ իմաստութիւն. այլ ո՛չ արդիւնք կայ և ո՛չ արժանիք, և բարոյական կենաց յարաբերութիւնք ի զուր կը փնտուին:

Կրնայի ոչխարներու հօտից և արջառներու երամակաց օրինակներն ալ յիշել, բայց ես քիչ մը աւելի պիտի յառաջեմ, և պիտի նկատեմ այն մարդկային բազմութիւնը՝ որ ահագինս կը ներգործէ և հիացման արժանի կը դատուի. բայց բարոյական կենաց ամբողջ աղդեցութիւնը բաւականապէս չզդար: Բանակ մը՝ գոգ իբր նիւթական մարդազէն մըն է իւր հրամանատարին ձեռք. բաւական է որ նիւթական գործոյն պէս՝ անշարժ և անկրկելի մնայ, և արդիւնքը չմխալիր, որչափ որ հնար է մարդն մեքենայի փոխարկել: Որչափ և նուազ տեսնուի բարոյականութեան հետքը զինուորական բանակներուն մէջ, սակայն հոն իսկ զայն ջնջել հնարաւոր չէ. զինուորական գիտութիւնը ուղեց մարդը մարդամեքենայի փոխարկելով պատերազմական արհեստը գործարանի մը արհեստին նմանցնել, բայց չյաջողեցաւ տակաւին. վասն զի անհրնար է մարդուն բնութենէն բարոյականի աղդեցութիւնը ջնջել: Միթէ պիտի կարենա՞ն երիկեանք ոմանք իրենց նորիմաստ, չըսեմ թէ անիմաստ դրութեամբը

բարոյականութիւնը աշխարհէ հալածական տանիլ, և  
բնական և լոկ ձեւական արտաքին օրէնքներով ընկե-  
րութիւն մը կազմել, և այդ ձեւերով կազմեալ ազ-  
դութիւնները յառաջադիմութեան փութացնել:

Խնդիրը համարողական չէ որ հաշուական ձե-  
ւերով կարող լինիմ զայն լուծել: Զգածմանց և խոր-  
հըրդոց, պատճառաց և գործոց առնչութեամբ բաղա-  
դրեալ խնդիրը են: Իւրաքանչիւր ոք յիւր միտս և  
սրտի, յիւր խորհուրդս և զգացումս փնտոէ, եթէ  
չունի արդեօք յինքն աւելի ինչ քան զլոկ մեքենա-  
կան կարողաւթիւն: Փնտոէ իւր գործոց մէջ թէ միշտ  
նիւթական զօրութեան և բռնութեան ազդեցութեամ-  
բը արդեօք կը շարժի: Փնտոէ իւր կացութեան մէջ  
թէ միայն օրինաց գրոյն տրամադրութեանց արդեօք  
կը հպատակի: Փնտոէ իւր օրինաց մէջ թէ կատարե-  
լապէս իւրաքանչիւր շարժման և գործոյն համար ո-  
րոշ և յայտնի կարգադրութիւն մը. կը գտնա՞յ արդեօք:  
Փնտոէ իւր վայելից և հաճութեանց մէջ թէ միայն  
փոփոխակի յարաբերութիւններէ և այնպիսի իրերէ  
որք նիւթական դոյտթիւն իսկ չունին, չազդուի՞ր  
արդեօք իւր գործոց ժամանակ: Փնտոէ իր նմանեաց  
մէջ որոց հետ հանապաղ կը կենակցի. չկայ անշօ-  
շափելի և անզգալի, այլ միշտ իմանալի և հասկանալի  
միութեան զօդ մը՝ որով մարդիկ իրարու միաւորուելով  
ընտանիք և ազգութիւն կը կազմեն: Փնտոէ թող  
մանրակրկիտ խուզողութեամբ իւր անձը՝ իւր ամեն մանր  
շարժման և իւր կենաց ամեն ակնթարթին մէջ, և  
ըսէ թող թէ կընայ, թէ բարոյական կացութեան մը  
գոյութիւնը առեղծուած և առասպելէ, և ոչ իրա-  
կանութիւն և ճշմարտութիւն:

Եթէ բարոյականութիւնը այդպէս անբաժին է  
ի մէնջ, և բարոյական կեանքը անբաժին մեր բնական  
կեանքն, միթէ հնար է այնպիսի իմն գրութիւն բո-  
տեղծել, թէ ոչ իրօք գոնէ մտօք, որուն մէջ բարո-  
յականութիւն ոչնչանայ և ամենայն ինչ բնականին վե-  
րածուի՛ և այդ գրութիւնն ալ կարող ըլլամք մեք աղ-  
գութեան մը պատկանեցնել, և կամ չայ երիտասար-  
դութիւնը կարող ըլլայ զայն չայ աղգութեան պատ-  
շաճեցնել: Երիտասարդք, որք իրականութեան և բը-  
նականութեան սկզբամբք զգածեալ էք աշունիդ գար-  
ձուցէք չօրս գին, զիրքերը քննեցէք որչափ և կա-  
րուէք, երկրին անդունդները իջէք անցելոյն յիշատակ-  
ները գտնելու, ի մի հաւաքէցէք ինչչափ տեղեկու-  
թիւն որ ունիք աշխարհին սկզբէն մինչև ցայսօր, ա-  
մեն տեղ՝ և ամեն տաեն՝ և ամեն ձեփ տակ բարո-  
յական վիճակի և բարոյական կենաց գրութիւնը ի-  
րական բան մը եղաւ և է, և առանց անոր մարդկա-  
յին գոյութեան յիշատակը չկայ, և ինչչափ մարդ-  
կութիւն զարգացաւ և ձեւակերպեցաւ, այնչափ և բա-  
րոյականութիւն զօրութիւն և ազդեցութիւն զգեցաւ,  
ինչպէս ուրեմն բնականը բարոյականէն կարենամք  
մեք զատել, ինչպէս անբարոյական մարդկութիւն մը  
կարող լինիմք մեք ըմբռնել:

Հապա ուրեմն, չայ երիտասարդք, որ ազգու-  
թեան յառաջադիմութեան եռանդեամբը կը տուչորիք,  
հաստատութեամբ գիտցէք թէ ճշմարիտ յառաջադի-  
մութիւն և զարդացում չէք կարող ձեր մտաց մէջ  
երևակայել, եթէ ոչ ամբողջի մը իւրաքանչիւր մա-  
սմաց հաւասարապէս զարդացման մէջ: Մեր ազգու-  
թիւնն ալ, ինչպէս բոլոր հին և նոր՝ մերձաւոր և

հեռաւոր ազգութիւնք, բնական յառաջադիմութեան հետ՝ բարոյական յառաջադիմութիւնն ալ կը պահանջէ, և այնչափ աւելի կը պահանջէ, որ պատմութիւնը և փորձառութիւնը կը դնէ մեր աշաց առջեւ շատ զօրաւոր և յառաջադէմ ազգեր, որը կործանեցան և կը կործանին լսկ իրենց բարոյական յետադիմութեան պատճառաւ: Բարոյականի վրայ անհողութիւնը իրենց շատ վասակար եղաւ, բարոյականը բնականն ալ հետը քանդեց և կործանեց, և պետութիւնք և ազգութիւնք կործանում տեսին և կը տեսնեն սոսկ իրենց բարոյականի մասին ունեցած անհոգութեանմբը և թուզութեամբը: Երիտասարդք, որ մեր ազգին յառաջադիմութեան ձեռք զարկած էք. Երիտասարդք, որ վերին Նախախնամութենէն մեր ազգին կատարեալ յառաջադիմութիւն մը տալու պաշտօնը ընդունած էք. Երիտասարդք՝ որք աչուընիդ չգոցած Հայ ազգութիւնը յառաջադէմ տեսնելու բաղդն ունենալու սահմանուած էք. Երիտասարդք որ մեր լքանելու պարտաօք եղած հասակին ասպարէզը դրաւելու կը մտնայք. մի՛ անարդէք զձեզ սիրող և ձեր վրայ զարմացող երիցադոյն եղօք մը ձայնը՝ որ փորձառութեամբ կը յանձնարարէ. — Յառաջադէմչէք կինար գործել Հայութիւնը, եթէ և բարոյական չէք գործեր զայն. յառաջադիմութիւն՝ որ զբարոյականութիւն կանարգէ, իրական և տեսական լինիլ կարող չէ:

Հարկէ ինձ ուրեմն որ այդ բարոյական ասպարէզին մէջն ալ մտնեմ, և կարեսը բացատրութիւնը և լուսաբանութիւնը ուկնդրացդ առջեւ դնեմ: Բայց զայդ լիապէս կատարելու համար պէտք էր որ գուք ներողամիտ ըլլայիք նոյնչափ ևս, ձեր բարեսիրտ ուն-

կընդրութիւնը չնորհել ինձ, որչափ ցարդ չնորհել բարեհաճեցայք. այնչափ ընդարձակ է՝ այդ նոր ասպարէզը՝ զոր ի հեռուստ գոնէ ձեր ուշագրութեան կը ցուցնեմ: Բայց կը տեսնեմթէ ինձ սահմանեալ ժամը և ժամանակը լրացուցի, և օրէն չէ որ առաւել ևս ձեր բարեսրութեամբ զեղծանիմ:

Բաւական կը սեպեմ հարեանցի նշանակել, թէ բարոյական կեանքը և բարոյական սկզբունքը կը գործագրէ ոք նկատմամբ իւր անձին, իւր ընտանեաց, իւր ազգին և իւր կըօնից:

Իւր անձին նկատմամբ՝ ուղղութիւն: Ուղիղ միտք, ուղիղ սիրտ, ուղիղ կամք, ուղիղ գործ. մի՛ կեղծեօք երեեցունել ինչ և իրօք ստել. մի՛ երեութիւ գոհանալ՝ և արդեամք անհոգ լինիլ. մի՛ օտար նպատակներու հետևելով՝ գործերը խառնակել. մի՛ ճշմարիտ վախճանը մառնալով անուղղայ հետոց վրայ քաւել: Ամեն գործոց մէջ, ամեն անձի հետ, ամեն պարագայի նկատմամբ՝ ուղղութեամբ դատել պարտքը և իրաւունքը, և իրեն համար ապահով կանոն մը հետեցունել ի համեմատութեան ընդ բնական և աստուածային և եկեղեցական և ազգային և քաղաքական օրինաց, որք յամենային մեր գործերը կը կարգադրեն, և մերթ ընդ մերթ առերեոյթ հակառակութիւններ կ'ունենան. սակայն ուղղութեան սկզբունքը գիտէ զանոնք անհակառակ միաւորել: Ուղղութեան սկզբամբ իսկ կընաց մարդն ուղիղ գասակարգութիւն մը հաստատել անձնականին և ազգայնոյն, մասնաւորին և ընդ հանրին մէջ, և այն յառաջնութեան օրինօք՝ զորս ուղղութիւնն կը թելսդրէ, իւր ամեն գործերը տրամադրել:

Ընտանեկան կենաց նկատմամբ՝ յարում։ Այդու  
միայն ամենայն ինչ կը պարզի . վասն զի եթէ ընտան-  
եաց յարեալ չես , ինչպէ՞ս ազգին կը յարիս՝ որ ըն-  
տանեաց միտուրութիւն է . և եթէ ընտանեկան առ-  
պարէզին մէջ չորվեցար հասարակային բարւոյն պաշ-  
տօնը , ինչպէ՞ս կրնաս զայն աւելի ընդարձակ ասպա-  
րէզին մէջ գործածել : Ընտանեաց յարումը կը գործա-  
դրես ծնողացդ սէր և պատկառանք և օդնութիւն նուի-  
րելով երախտագէտ սրտիւ , եղբարցդ և քերցդ միս-  
թարութիւն և քաջալերութիւն ըլլալով , ազգակցացդ-  
գործնական սէր արայացտերվլ , ընտանեկան կենաց  
մէջ զանելով այն քաղցր և կենակցական տիստանքը՝  
դոր վայրապար կը փնտուես օտարաց քով և փողոցնե-  
րու վրայ : Բայց ես աւելի ինչ պիտի յաւելում : Եթէ  
ընտանիք ազգութեանց տարրներն են , ո՛չ լոկ բարո-  
յական առմամբ , այլ և նիւթական առմամբ սերն-  
դեան և յօդակապութեան . միթէ բոլորովին իսկ որ-  
խալ չէ մեր արգի երիտասարդաց ընթացքը՝ որք կը  
խորշին իրենց ընտանիք կազմել երբ բնութիւնը զայն  
իրենցմէ կը պահանջէ , և յետածգելովն՝ կամ բոլորո-  
վին իսկ կը զրկուի և կը զրկէ ազգը իրական և թուա-  
կան արդիւնքներէ , կամ թէ ապաժաման գործադրու-  
թեամբ կը զրկուի և կը զրկէ ազգը օգտակար և պըտ-  
զաբեր արդիւնքներէ : Ուր թողումը ևս այն վնասնե-  
րը՝ որք ցոփակեաց ընթացից անբաժին ընկերք են : Ոչ  
ինչպի բնական և բարոյական արդիւնքներ կը տես-  
նէր ազգը՝ եթէ ընտանեկան բարոյականութեան ազ-  
գեցութեան ներքեւ ապրէր երիտասարդութիւնը :  
Չեման զիտահար թէ պարտաւորեալ պճնութեանց և  
ակնածութեանց երկիւղը կը խուսափեցնէ երիտա-

ոարդները ընտանեկան կենաց հետամտութենէ , որոյ  
վասն և ընդհանուր բարոյականութեան շահաւէտ ձայն  
մըն էր Պարզասիրութեան ձայնը՝ զոր ազգասէր թա-  
ղիս մէջէն հնչեցուցին բարեսէր տիկնայք և օրիորդք ,  
և որուն դովաբանական արձագանք տուին իշխանա-  
ւոր և իմաստուն սիրտեր : Ինչչափ ալ դժուառութեանց  
ենթակայ է գործդ , բայց ես կը յուսամ և կը մաղ-  
թեմ , որ զայն խորհելու և սկզբնաւորելու պարծանքն  
ունեցող չայունիք , գործադրութեան փառքն ալ ու-  
նենալու ջանան՝ և ջանքերնին ալ պսակուի :

Ունիմը և ազգայնական բարոյականութիւն մը , և  
ասոր սկզբունք են՝ արդարութիւն և սէր . արդարու-  
թիւն չարին նկատմամբ՝ և սէր բարւոյն նկատմամբ :  
Ոչ միշտ օրէնք և սահմանագրութիւնք մեզի գործոց  
կանոնը կ'ընձեռեն . իբր զի այնչափ և այնպիսի են  
մարդկային գործոց տեսակները և պարագայները , որ  
անհնար է անոնց ամենուն նախատեսութիւնը ունե-  
նալ , և զրաւոր և որոշ կերպով առնելոյ կանոնը օրի-  
նագրել : Բարոյական սկզբունք՝ որոնք սրտերու մէջ  
բնածին կերպով հաստատեալ են , զիտեն այդ պարագը  
լեցնել , և նովին իսկ իբր ոգի կ'ոգեսրեն օրինաց զի-  
րը . որ ինքնիրեն մնացեալ ոչ այլ ինչ է եթէ ոչ մար-  
մին անկենդան , անգործ և անազգեցիկ : Որպէս զի  
անխոտոր կանոն մը ունենայք ազգային գործոց մէջ ,  
նկատեցէք ուշադրութեամբ գործերնիդ՝ թէ բարեք  
իցէ եթէ չարիք ազգին համար . եթէ բարիք է՝ սիրով  
վարուեցէք և ինչպէ՞ս սէրը կը սորվեցնէ չափ չգիտ-  
նալ և կըցածը ընել ըրէք և դուք այնպէս : Իսկ թէ  
չարիք է՝ արդարութեամբ զինաւորուեցէք : Ակն ընդ  
ական և ատամն ընդ ատամանը՝ օրէնք է աստուածա-

դիր : Եթէ Նորոյ կտակին Օրէնսդիրը չարին դէմ ալ սէր ցուցնել հրամայեց . ոչ ընդհանուր բարւոյն և ոչ ընդհանրական շահուց ակնարկեց այսու , այլ միայն անձնական կատարելութեան աստիճանին : Կրնայք ձեր բաճկոնը յափշտակողին շապիկնիդ ալ տալ , կամ աջ ծնօսնիդ ապտակողին ձախերնիդ ալ դարձնել . բայց երբ բաճկոնը ձերը չէ , ազգինն է , ծնօսը ձերը չէ , ազգինն է , եթէ շապիկն ալ տայք կամ ձախ ծնօսն ալ դարձնէք , շարագործութեան գործակից կըլլայք և ոչ բարեգործութեան գործադիր : Արդար եղիք ուրեմն չարին հետ , և բարւոյն նկատմամբ սիրալիր . և ազգային բարոյականութեան լուռմը կը կատարէք :

Կրօնից վրայ ալ ձեր ուշադրութիւնը հրաւիրեցի իբր բարոյականութեան լուռմն . ինչպէս ճանցան և կը ճանչնան զայն ամենայն ազգք և ազինք , և ինչպէս դաւանեցին և կը դաւանին զայն ամենայն իմաստունք : Կրօնք ըստ նոր իմաստոց ոմանց աւելորդինչ է և մոտացածին , և առանց կրօնից կը կարծեն թէ ազգային յառաջադիմութիւնը լաւագոյն ևս պիտի յառաջէ : Կրօնք , կըսեն , մոտաց թոփչը կը կապէ , և զարգացման ասպարէզը կը փակէ . կրօնք աւելորդութեամբ միտքը կը ծանրացնէ և աւելորդ ձեւրով սիրու կը խառնակէ : Այլ ա՛զէ , ու՞ր երբէք տեսին ազգ մը առանց կրօնից յառաջեալ , ու՞ր երբէք տեսին կրօնքը որ ազգ մը կրօնանէ : Իսկզբանէ ծանուցեալ աշխարհի կրօնիւք վարեցան ամէն ազգեր , և կրօնիւք յառաջացան Հրէայն և Հելլէնն՝ Խուժն և Դուժը . կրօնիւք այսօր կը պանծան ազգեր՝ որոց յառաջադիմութեան ակնկառոյց եմք և նախանձաբեկ իսկ . և ո՞ր այն յառաջադիմութիւնն է՝ որոց դաշտական իսկ

չունիմք և զոր առանց կրօնից պիտի ստանամք : Եթէ երբեմն կրօնից պաշտօնեայք՝ կրօնից պատրուակաւ ազգութեանց շահուց և ձգտմանց հակառակեցան՝ և իրենց ընթացիւք առելութիւն ժառանգեցն , միթէ կրօնից ի՞նչ մեղ իցէ եթէ ոք անով կը զեղծանի : Թողարկուք , Հայ երիտասարդոքք , թողարկուք , որ ուրիշները ի մասնաւորի իրենց կրօնից և իրենց կրօնականաց նկատմամբ խնդիրներ յուղեն և վէճեր յարուցանեն , ձեզ բաւական ըլլայ Հայուն կրօնքը՝ Հայ ազգութեան հետ բաղդատեալ , և Հայ կրօնականը՝ Հայ յառաջադիմութեան հետ գիմադրեալ : Ուրախ լե՛ր , Հայ Երիտասարդութիւնն , որ Հայ ազգութեամբ կը պարծենաս , ուրախ լե՛ր . վասն զի Հայ ազգութեանդ առաջին պաշտպանը՝ Հայ կրօնքը ազգութեանդ օթևանի՝ Հայ եկեղեցին , առաջին զիեղաւ , առաջին օթևանի՝ Հայ եկեղեցին , առաջին զիեղաւ , առաջին նուորը՝ Հայ կրօնական : Յորչափ քու կրօնքդ չունի ի՞նչ նուորը՝ Հայ կրօնական : Յորչափ քու կրօնքդ չունի ի՞նչ նուորը՝ Հայ կրօնականդ է՝ որ ազգութեանդ վնասէ , և չնուիրագործեր սկըզոր ազգութեանդ վնասէ , որ յառաջադիմութեանդ արգելք դնէ . ցորեունք մը՝ որ յառաջադիմութեանդ արգելք դնէ . ցորեունք եկեղեցիդ է՝ ուր լեզուդ և ազգդ պահուեափ քու եկեղեցիդ է՝ ուր լեզուդ և ազգդ պահուեափ անբանաբարելի ազգուցան , և որոյ յարկին ներքեւ անբանաբարելի ազգուցան , կը գործէ : Այս երկնչե՛ր , Հայ Երիտասարդութիւնն , կը գործէ . մի՛ երկնչե՛ր , Հայ Երիտասարդութիւնն , քու կրօնքէդ , մանաւանդ թէ յարգէ՛ և պատուէ քու կրօնքէդ , միայն ասառւածային և հօգեսոր բարեկ մըն է այն , այլ և ամբողջապէս և իսկապէս ազգային բարեկ մը :

Քեզ զի՞ փոյթ աստուածաբանից նրբութեամբ

անքննին խորհրդոց խելահաս լինելու աշխատիլ քեզ  
զի՞ փոյթ իմաստասիրաց ճարտարամտութեամբ ա-  
նըգդալի իրաց զգալի կերպարանը որոնել . զիտու-  
թիւնն լցո կը բերէ , այլ անխորհուրդ և արտաքնա-  
յարդար գիտութիւն , որ գիտութիւնն իսկ չէ , ի մո-  
լորութիւն ածէ : Կրօնքը , Հայե՛ր , գիտութենէ չի-  
փափչիր : Խնչ ձիքը որ Քրիստոնէական կրօնքն ունե-  
ցաւ ընդհանրապէս՝ ունի զայն Հայն ըստ ամենայնի .  
վասն զի կը պահէ քրիստոնէութիւնը , ինչչափ հնար  
է , իւր հնաւանդ ձեին ներքեւ . կը խորշի յամենայնէ  
որ նոր է և նորամուստ , և որ կամ ի կայսերական մեծ-  
փայելութենէ կամ յաշխարհական զօրութենէ զիտէ  
իւր ծագումը :

Դու ող Հայ ես , և Հայ Հարցդ հետոց վրայ քա-  
լել կը սիրես , անցեալ տարիները քննէ՛ . տե՛ս քու  
հարցդ կրօնական հաւատքը , և կրօնքդ սիրէ՛ որ ազգդ  
զօրանայ , ազգդ սիրէ՛ որ կրօնքդ փառաւորուի . և  
իրերաց խառնմամբ բարոյական օրինաց թագաւորու-  
թիւնը ընդարձակի ի քեզ և ի հայրենիս քո :

Յորչափ ունիս դու քեզ Գրիգորներ և Ներսէա-  
ներ , Սահակներ և Մեսրոպաներ , Եղիշէներ և Ղե-  
տոնդներ , պաշտօնեայս կրօնից և պաշտօնեայս ազգի ,  
որք կրօնքով ազգենին փառաւորեցին , և ազգով կը-  
րոնքնին բարձրացուցին , ցորչափ քու այժմեան կրօնա-  
կանքդ այդ գիւցագանց հետքերը կը սիրեն և այդպի-  
սի հարց օրինակին կը նմանին , կրօնասէր եղի՛ր , Հայ  
երիտասարդութիւն , որ ազգասէր ըլլաս :

Ոչ ըստ գիպաց է ձեր անուանակոչութիւնը ,  
Սուրբ-Սահակեան սանունք . Սուրբ Սահակեան հո-  
վանաւորութիւնը կրօնական միայն չէ ձեզ , այլ ազ-

գասիրութեամ օրինակ և խթան : Աւրախ եմ որ այդ  
յայտարարութիւնը կ'ընեմ ընդ Սուրբ-Սահակեան հո-  
վանեաւ , և յիշատակի տօնախմբութեան Սրբոյն Սա-  
հակայ ազգասէր հայրապետիս . ասո՞ւր ամենայն ինչ  
կարծես թէ հիանալի կերպով խօսիցս հաստատու-  
թիւն կ'ընծայէ :

Հայ երիտասարդք , ինքինքս սրբազնն բեմբա-  
սացի մը պարտքը կատարող չեմ կարծեր , երբ բա-  
րոյական շրջանին պարտքերը կ'երկրորդեմ , և կը յանձ-  
նարարեմ կրկին և կրկին որ եթէ ազգերնիդ կը սի-  
րէք և ազգերնուդ յառաջադիմութիւնը իրաւցնէ կ'ա-  
զէք , բարոյական սկզբանց պաշտպան ըլլաք և սիրող  
և հետևող . ուզգութիւն անձնական սահմանին մէջ ,  
յարում ընտանեկան շրջանին մէջ , սէր և արդարու-  
թիւն ազգային ասպարէզին մէջ , յարդ և պատիւ կը-  
րօնական պարունակին մէջ : Այս է բարոյականութեան  
լլումը՝ որ անբաժին է ի բնականէն . այդ է յառաջա-  
դիմութեան լրումը , եթէ ճշմարիտ յառաջադիմու-  
թիւն կ'ուզէք :

Ես էի որ ձեր հասակին գովեաները խօսեցայ .  
ես էի որ ազատաբերան ձեր իրաւունքը եղող պար-  
ծանքները պաշտպանեցի . ես էի որ բնական յառա-  
ջադիմութեան պէտքերը ճանչցայ , և մինչեւ իսկ գր-  
րամական կարողութեան համար յանձնարարութիւններ  
ընել չքաշուեցայ . ես էի որ ազգային հոգւոյն գործ-  
նականապէս արթննալուն և արթնցնելու համար յոր-  
դոր խօսիլ չքաշուեցայ . նոյն ինքն ես եմ որ բարոյա-  
կան մասին նկատմամբ մի և նոյն սրտով և մի և նոյն  
ըղձիւ յայտարարութիւններ և յորդորակիներ կը խօսիմ :  
Հայ երիտասարդութիւն , քեզի խօսեցայ . Հայ

Երիտասարդութիւն, քու վրադ լուսեցայ : Հայ երի-  
տասարդութիւն քեզի համար խօսեցայ . Հայ երի-  
տասարդութիւն, որ եսդ այժմ, ահա իմ առ քեզ  
լրման խօսքերս : Երիտասարդութիւնք որ անցին՝ ի-  
րենց պարտքը կատարեցին, բայց գուն դեռ աժդոհ  
ես . կ'ուզէիր որ աւելի ինչ ըրած ըլլային, բայց սա-  
կաւիկ մի ևս և դու կը մտնես ի կարգ այրութեան  
և կը թօժտափին քեզմէ երիտասարդական սյժը և աշ-  
խոյժը . այն օրը նոր Երիտասարդութիւնը որ պիտի  
դայ, քեզ պիտի ստգտանէ : Եթէ առաւելին անյազ-  
բաղձանքէն յառաջ եկած ստգտանքներ ըլլան, մի՛  
քաշուիր, այլ վախցի՛ր, չըլլայթէ իրաւացի ստգտանք  
մը կարենան դնել յետագայք քու վրադ : Եթէ երի-  
տասարդութիւնք որք անցին՝ մեծամեծ պարտքեր ու-  
նեցան, այլ քուկդ անոնցմէ մեծագոյն է, Քիչ մը  
չորս կողմդ նկատէ, քիչ մը զրուցուածները լսէ՛ . քիչ  
մը պահանջուածները կշռէ՛ . քիչ մը պակասութիւնները  
քննէ՛ : Ակատէ՛, լսէ՛, կշռէ՛, և քննէ՛, և ըստ այնմ գործէ՛  
գործէ՛ ժամանակին յարմար, գործէ՛ պարագայից հա-  
մեմատ, գործէ՛ պահանջուածին ի դէպ, գործէ՛ կարօ-  
տութեանց ըստ կշիռ . թո՛ղ արդիւնքդ շատնայ,  
թո՛ղ անունդ փառաւորուի, թո՛ղ պարծանքդ աւելինայ,  
և ժամանակակիցք և ապագայք փառօք յիշատակեն  
զքեզ միշտ, և լիբերան գոչեն՝ ի քեզ ակնարկելով,  
որպէս կը գոչեմ և ես . Կեցցէ՛ Հայ երիտասարդու-  
թիւն :

## Բ. Ա. Ն. Ա. Խ Ս Ո Ս Ո Ւ Թ Ե Ւ Շ

### ՄԱՂԱՔԻԱՅ Ե. ՎԱՐԴԱՊԵՏԻ ՕՐՄԱՆԵԱՆ

ՀԱՅՈՒՆ ԱՆՑԵԱԱԾ, ԵԽՐԿՈՅՆ ԵՒ ԱԳԱԴԱՅՆ.-Արտասանեալ ի լսարանի Ընթերցասիրաց ընկերութեան յօրթաքէոյ, ի 8 յունուարի 1879. հրատարակեալ ի Մասկո լրագրի թիւ 2250—2240 :

ՀԱՅՈՒԹԵԱՆ ՀՈԳԻՆ .- Արտասանեալ ի լսարանի Կրթասիրաց ընկերութեան յիւսկիւտար, ի 26 մայիսի 1879. ապագրութիւն Պ. Քիրիշճեան :

ՄԵՐԻԹԻԻՆ ՀԱՅՈՒԹԵԱՆ .- Արտասանեալ ի լսարանի Կրթասիրաց ընկերութեան յիւսկիւտար, ի 17 մայեմբերի 1879. ապագրութիւն Յ. Գավաթեան :

ՀԱՅ ԱԶԳՈՒԹԻՒՆ .- Արտասանեալ ի լսարանի Արամեան վարժարանին ի Գատըքէոյ, ի 25 դեկտեմբերի 1879. ապագրութիւն Ե. Մ. Տնտեսեան :

ԿԱՐՈԾ ԵՄՔ .- Արտասանեալ ի լսարանի Ընթերցասիրաց ընկերութեան յօրթաքէոյ, ի 10 փետրուարի 1880. հրատարակեալ ի Թէրժէանը Էֆեռտ լրագրի թիւ 794—800 և արտասպեալ առանձինն :

ՀԱՅ ԵՐԵՍԱՍԱՐԴՈՒԹԻՒՆ .- Արտասանեալ ի լսարանի Ա. Սահակեան Սանուց ընկերութեան ի Սամաթիա, ի 24 փետրուարի 1880 ապագրութիւն Ա. Ա. Գանթար :

Կը գտնուին ի Ստամպօ՛ գրավաճառ. Յ. Գավաթեան, և ի Պալաթիա՝ թղթագաճառ. Յ. Արշակ Էֆէնտիներուն խանութները :

ԳԻՆ 3 ՂՈՒՐՈՒՇ ԱՐԾԱՅ

